


Ա Ռ Օ Ն


Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԸՅԳԷՅԻՆ, ԲԸՆԸՄԻՐԿԱՆ, ԳԻՐԳԻՏԿԱՆ
ԵՒ ՔԸԴԸՔԸԿԱՆ

ՈՒԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻՐՄԵԸՅ



ՅԵՐՈՒՍԸԴԷՄ
Ի ՏԳԱՐԱՆԻ ՄՐԲՈՑ ՅԱԿՈՎԱԲԵԱՆՑ
1873



ՈՒԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ
ԹԻԻ 12.

ԱՄՍԱԳԻՐ

ԴԵԿՏԵՄԲԵՐ 31
1873.

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՆԻ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ

Բ. Աշխատիլը պարտք է ընկերական օրինոք :

« ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ամենուն բարւոյն համար եղած է և ամեն մէկուն բարին ըսել է, ուրեմն իւրաքանչիւրին պարտքն է իւր բարւոյն ետեւէն ըլլալ » :

Այն համար օտ ասացուածքէն կ'ի մանամբ որ ընկերութիւնը ամեն մարդու վայելած և վայելիլը բարեաց կեդրոնն ու աղբիւրը լինելուն համար, ամեն մարդ եւս առ հասարակ պարտաւորութիւն ունի ընկերութեան ապահովութեան և բարելաւութեանը հոկել ու հոգ տանել մեծ խնամածու

թեամբ : Ինչպէս ընտթեան գործունէութիւնը տիեզերքը կանգուն կ'պահէ և կարգիւնաւորէ զայն, նոյնպէս մարդոց աշխատութիւնը մարդկութիւնը կանգուն կը պահէ, կը լիացնէ, կ'ազնուացնէ և կը բարձրացունէ : Երբ ընտթիւնը դադրի գործելէ՝ տիեզերք կ'աւերի, երբ մարդիկ դադրին աշխատելէ, մարդկութիւնը կ'եղծանի : Ընդհանուրի վնասէն մասնաւորը ազատ չի կրնար մնալ, ընդհանուր օրէնք է այս. ուստի երբ մարդկութիւնը եղծանի, մարդիկ եւս պիտի եղծանին առ հասարակ. երբ ընկերութիւնը թշուառ լինի, ընկերութեան ամեն մէկ անդամն եւս թշուառ պիտի լինի, աւսոր տարակցոյ չը կ'ոյ : Այսպէս է և

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ II.)

տորա հակառակը, երբ ընկերութիւնը երջանիկ լինի, անհատք եւս երջանիկ կարող են լինել, երբ մարդկութիւնը աշուճացած ու բարձրացած լինի, մարդիկ եւս կարող են ազնուանալ ու բարձրանալ. ահա սոյն ընդհանուր օրէնքն է որ կրտսի ընկերական օրէնք և որ մարդկութեան օրէնք ըսել է. սոյն օրէնքը կը տիրէ առ հասարակ աշխարհ մէջ, սոյն օրէնքն կ'իջնէ անխտիր ընկերականութեան իւրաքանչիւր աստիճանին մէջ գտնուած ամեն անհատի վրայ. սոյն օրինաց հնադան դիւ պարտին անխտիր, ինքնակալ թաւաւորներէ սկսեալ մինչեւ յետին ծառայն, և կատարեալ մարդէն սկսեալ մինչեւ պատանեակն, որ նոյնպէս գործունէութեան մէջ է միշտ:

Մարդիկ ընկերական են, այս հաստատուած է շատ փորձերով և անթիւ ապացոյցներով. ուստի մարդ մը իբրեւ կենդանի կերակրուելու և ապրելու համար, ինչպէս որ բնութեան օրինաց հնադանդելով աշխատիլ պարտաւոր է, նոյնպէս իբրեւ մարդ կենցաղավարուելու և ընկերութեան մէջ ապրելու համար ընկերական օրինաց հնադանդելով աշխատիլ պարտաւոր է, և եթէ ամեն մարդ սոյն օրինաց հը պատակելով ընկերական կարգադրութիւնները յարգէ և իւր անհատական պարտաւորութիւնները անթերի կատարելու փոխ ամենի, ահա սոյն առանձին մարդկութիւնը իւր բուն նշանակութեանը համապատասխանելով, պիտի կարողանայ հասնիլ այն բարեբաւութեան, որուն արժան է և այն բարձրութեան, որուն համար որ ըստեղծուած և կոչուած է իւր իսկ Արարչէն. մարդիկ թշուառ լինելու և տառապելու համար միայն չեն ապրիր աշխարհի վերայ, ինչպէս օմանք ասած են. այս առարկութիւնը

նրն հակառակ է Աստուծոյ բարութեան և արդարութեանը. Աստուած երկրի վրայ եւս ջրուած է մարդոյն համար շատ բարութիւններ, միայն թէ մարդն նոյն բարիքները ուղիղ ճանապարհաւ վայելելու և երջանիկ լինելու եղանակը պարտի գիտնալ. ինչպէս ասացինք, մարդիկ ընկերական լինելով փոխադարձ շահերով և պարտաւորութիւններով այնպէս սերտ կապուած են իրարու հետ որ իւրաքանչիւրի երջանկութիւնը կամ թշուառութիւնը որչափ որ իւր աշխատութեան, այնչափ ալ իւր ընկերէն կախեալ է. հետեւապէս առանց ընդհանուր պարտաւորութեան ընկերականութիւնը չը բարգաւաճիր եւ առանց ընկերական բարգաւաճման անհատական երջանկութիւն չը գոյանար. ընկերական երջանկութիւնը առանձին մարդու երջանկութիւն ըսել է. « Ընկերային բարեբաւութիւնը, կը նշանակէ մարդու երջանկութիւնը. բաղադրողի ազատութիւնը եւ ազգաց մեծութիւնը ». քանի որ առանց ընկերական բարգաւաճման անհատական ճշմարիտ երջանկութիւն չը կայ. մարդիկ կը պարտաւորին ամենէն առաջ ընկերական բարգաւաճման հոգ տանել և այս կը լինի միմիայն անհատական գործունէութեամբն ու պարտաւորութեամբը:

Մարդոց պիտոյքները բազմապատկ լինելով, մէկ մարդ մը իւր ամեն պէտք ունեցածները անձամբ պատրաստելու ժամանակ չի կրնար ունենալ, այս պատճառաւ ամենուն պէտքերը եւս պատրաստելու աշխատութիւնը մարդոց մէջ բաժնուած է՝ ուրոց ամեն մէկը հանրութեան դէպքերէն բան մը կը պատրաստէ. սրով հետեւ աշխարհիս վրայ սեփականութեան իրաւունք եւս կայ, սոյն իրաւ

ւամբ ամեն որ իւր աշխատութեամբ պատրաստած որ և իցէ իրաց տէր կը լինի, սոյն տիրական իշխանութեամբ նոյն իրերը ըստ հաճոյս գործածելու, այն է ուրիշ մը տալու կամ ուրիշ մը ունեցածին հետ փոխելու իրաւունքը եւս ունի, (միայն թէ ոչ որ իւր աշխատութեան արդիւնքը ջնջելու կամ ոչնչացնելու իրաւունք չունի, որովհետեւ այն կերպով ընկերութեան օգտին կը մնասէ) ահա ասկից կը ծնի փոխանակութեան օրէնքը, սոյն օրինօք մարդիկ ունեցածին իրարու մէջ բաժնելով իրարու ունեցածի տէր կը լինին և ամեն որ իւր ամեն պէտքերը գիւրութեամբ հոգալու միջոցը ունենալով կրնայ հանգիստ ապրիլ. օրինակի համար երկրագործը երկիրը կը մշակէ և անոի կըստանայ իւր աշխատանաց փոխարէն ցորեան, գարի, հաճար և այլն. երկաթագործն անհարթ մետաղը դարձնելով երկիր հերկելու համար խոփ և ուրիշ գործածելի իրեր կը պատրաստէ. ոստայնան կը բազմաթիւ թելեր մէկ տեղ բերելով շորեղէն կը շինէ և այլ արհեստաւորք այլ գործածելի իրեր կը պատրաստեն մարդկային ազգի պիտոյից համար. որովհետեւ մարդոց պիտոյքն ըստ բազմատեսակ են աւսացինք, ուստի իւր սքանչիւր որ իւր պատրաստած իրերէն ուրիշ մը կարօտութիւնը լեցունելով իր փոխարէն նորա պատրաստածէն ալ իւր կարօտը կը լեցնէ. աւելի պարզ ասենք, յայտնի է որ երկրագործը երկիրը հերկելու համար խոփի պէտք ունի և ցուրտէն պահպանուելու համար զգեստի կարօտ է. նոյնպէս ալ երկաթագործն ու ոստայնան կը կերակրուելու համար ցորենի պէտք ունին. Արդ երկրագործը իւր պատրաստած ցորենին տէրն լինելով, երկիրը հերկելու համար խոփ մը և ցուրտէն պահպանուելու համար զգեստ որպէս

զի ստանայ, իւր ցորենէն կուտայ երկաթագործին և ոստայնային և փոխարէն կստանայ իւր ուղածները. ահա այսպէս իւր սքանչիւրն իրենց պէտք եղածը ունենալով կարօտութենէ կազատուին և այնուհետեւ գոհ ու երջանիկ կեանք մը կուենան և երկրի վրայ:

Ահա այս իրարու պէտք ունենալէն յառաջ կ'ուգայ ընկերական օրէնքը, որով մարդիկ փոխադարձ պատահաւորութեամբ փոխադարձ իրաւանց տէր լինելով, իրարու կեանքը կ'ապահովեն և ապրելու եղանակը կը դիւրացնեն. ով որ այս ընկերական օրինաց տրամադրութեան կը հնազանդի և իրեն վերաբերեալ պարտքերը կը կատարէ, նա արդար իրաւունք կ'ունենայ այն ատեն հասարակաց բարեացը մասնակցելու և վայելելու անդորր սրտիւ իւր արդար իրաւունքը. իսկ այն որ հակառակ արդարութեան ընկերական ընդհանուր օրինաց տրամադրութենէն շեղելով իւր պարտքը կատարել կը զանայ առ ընկերութիւնը, այն ատեն ընկերութիւնն եւս իրաւունք կ'ունենայ այնպիսի անպէտ և վնասակար անձը ընկերականութեան ընդհանուր բարիքէն զրկել և յապահովութիւն ընկերական ներդաշնակութեան և հասարակաց բարեաց այնպիսին հալածել ի բոց ընկերութենէ և այս ընելով մեծ արդարութիւն գործած կը լինի ընկերականութեանը. քանզի այն որ անօրոյթ կը լինի իւր պարտաւորութեանց և անարդարութեամբ ընկերականութիւնը իւր աշխատանաց օգտէն կը զրկէ, արժան է որ այնպիսին համայնից օգտէն զրկուելով թըշուառ լինի որպէս զի ատիպուի պարտաւորար լինել:

Ընկերական այս օրէնքը ճնամ է առաջին մարդոյն հետ, ուստի քանի որ

մարդկութիւնը կապրի երկրի վրայ, նոյն օրէնքն ալ կայ և պիտի իշխէ առ հասարակ: Եթէ մարդկային առաջին գերդաստանի կեանքը նկատելու լինիք, պիտի տեսնենք որ ընկերական օրինաց տրամադրութեան հնազանդութիւնը անոնցմէ կսկսի:

Երբ ծննդոց գիրքը կարդամք, կը տեսնեմք որ մարդկային Ազգի առաջին ամուլն երբ վայելից կեդրոնէն դուրս արտաքսուելով փշաբեր երկրի վրայ բնակութիւն հաստատուելու և իւր կեանքը իւր աշխատութեամբը պահպանելու կը դատապարտուի, շատ մեծ դժուարութեանց կը հանդիպի և անտանելի տառապանաց կը մասնուի շատ պիտոյքներէ զուրկ գտնուելուն համար: Առաջին մարդն ստիպեալ էր իօթի չը մնալու համար ուտեստ ձաւրել, արեւակէզ կամ ցրտահար չը լինելու համար զգեստ ձորել, անձրեւէն և տօթէն պահպանուելու համար բնակարան շինել և այլ ինչ բանի որ պէտք ունենար պարտաւորեալ էր ինքրն միայնակ և կամ բնական փափուկ տոկոճուած իւր տկար ընկերակցին օգնութեամբ հոգալ, որով կրնանք մակարերել թէ նոքա երկրագունտիս վրայ միայն մարդ գտնուելով և ընկերական կենաց փոխադարձ օգնութեանէ զուրկ լինելով ո՞րքան կը տառապէին իրենց ապրուստը հոգալու համար, անշուշտ նոքա ստիպուած էին անգաղար աշխատիլ և յօգնութեան ծանր բեռանը տակ ընկճիլ և նորէն կարտաւթիւն զգալ այլ և այլ և նոր նոր պէտքերու որոց կարեւորութիւնը հետ գհետէ ի յայտ կ'ուգար: Սակայն այս այսպէս չը մնար, նոցա տառապանքները կը մեղմանան և աշխատութիւնները կսկսին թեթեւալ այն օրէն, երբ ընկերականութեան շրջանակը կրկնապէս ընդլայնիլ և իւր տնձուկ վիճա-

կէն դուրս ելնել:

Սուրբ Գիրք կը պատմէ թէ երբ մարդկային ազգի առաջին ամուլն զաւակներ կ'ունենան եւ նոքա ծնողաց ինամօք աշուտեան եւ աշխատելու հասակին կը հասնին, անմիջապէս աշխատութիւնը կը բաժնուի նոցա մէջ, ազոյք կը սկսին մասնակցիլ իրենց ծրնողաց ինչպէս վայելմանց նոյնպէս և աշխատութեան մէջ: Կայէն երկիր կը մշակէր կ'ըսէ Ս. Գիրքն և Աբել հաւութիւն կ'ընէր, այսինքն իրենց ընդերացած կաթնաու խաշները կը դարմանէր, և այսպէս մարդիկ շատնալու սկսելով աշխատութիւններն եւս կը բաժնուին, հետեւապէս և արդեանց քանակութիւնը կը սկսի բազմապատկիլ, սոյն եղանակաւ երկրի վրայ կազմուած առաջին ընտանեաց կառավարութիւնը հետզհետէ կը սկսի կանոնաւորիլ եւ դիւրանալ: Հովելն իւր խաշանց արդիւնքը կաթն ու ասոր մէջ տեղ կը բերէ, երկրագործն իւր աշխատանաց արդիւնքը երկրի բուսուցած բերքերը կը բերէ մէջ տեղ, նախամայրն Եւայ իբր տնտեսագէտ եւ տնարար կին առտնին գործոց կը զբաղի, ինչպէս յատուկ է իւր սեւին, նա իւրաքանչիւրի բերած արդիւնքները զտելով մօքրելով, գործածութեան եւ զանակի կը վերածէր եւ սոյն աշխատութիւններով նա եւս հաւասար իրաւունք կ'ունենար նոցա հետ միասին նոյն արդեանց վայելման մէջ, իսկ նախահայրն Ադամ, նահապետական կենաց հիմնադիրն իբրեւ նախագահ և թագաւոր սոյն փոքրիկ տէրութեան, բաց ի իրեն ինկած նիւթական աշխատանքները կատարելէ իւր երիցութեամբ, իւր խելքով, իւր փորձառութեամբն եւ հայրական իրաւասութեամբն, իբրեւ մի պատկառելի տէր սոյն կառավարութեան զբաւին կեցած

կորցի կը դնէր ամեն գործերը, կը հսկէր պարտաւորութեանց կատարմանը և իրաւանց պահպանութեանը. արգարութեամբ կը բաժնէր աշխատանքն ու վայելումները. կը կազմէր հաւատարակչութիւն ընկերական կենաց մէջ և խաղաղութիւնն ու ներդաշնակ համաձայնութիւնը անխախտ պահելու փայթ կը տանէր, որով և ինքըն իւր աշխատանաց փոխարէն կը մասնակցէր նոյա և վայելմանց մէջ:

Այսպէս ահա պարտուց և իրաւանց սկզբունքը ծնունդ կ'առնու ընկերական կենաց հետ. ընկերական օրէնքը իւր սկիզբը կ'առնու երկրի վերայ առաջին ընտանիքէն, եւ փոխադարձ աշխատութեան պարտաւորութիւնը կը սկսի մարդկային ազգի առաջին գերդաստանէն: Աստի ահա պարզ կը տեսնուի որ՝ ինչպէս ընկերական օրէնքը նոյնպէս և նորա հաւաքանգերու պարտաւորութիւնը կը ծնի ամեն մարդու հետ մէկ տեղ, այսուպէս է որ մենք խելամուտ լինիմք մեր ընկերական պարտաւորութեանց, և պարտախտար լինելու փայթ պէտք եմք ունենալ. պէտք է գիտնամք որ մարդկութեան ինչպէս օգուտները, նոյնպէս և վնասները ամեն անհատի կը վերաբերի. որովհետեւ ընդհանուր մարդկութիւնը եւս մի մեծ գերդաստան է աշխարհի վրայ և ՚ի սփիւռս երկրի ցրուած ազգք և ազգիք մի ընդհանուր ընտանիք կը կազմեն, որոց աւանքն ևս իրարու հետ կ'ապրուած են փոխադարձ շահերով և իւրաքանչիւրի երջանկութիւնն ու կենաց ապահովութիւնը կախեալ է միմեանց պարտաւորութենէն: Շինութեան մը գեղեցիկ հաստատուն և տեւողական լինելուն առաջին պատճառն է ամուգ ձեռքինաց ընտիր և լաւ տեսակէն լինելը. այսպէս ալ ընկերականութիւնը

օրինաւոր, յառաջող էմ եւ երջանիկ լինելու համար պէտք է որ ամեն մարդ օրինապահ, աշխատասէր և պարտաւոր լինի:

Արդ որովհետեւ այսքան մեծ է ընկերական կենաց նշանակութիւնը, որովհետեւ մեծ ներգործութիւն ունի անհատական կենաց վերայ ընկերական կեանքը, որովհետեւ ընկերական կենաց վնասը գրեթէ ամեն մարդու եւս կը վնասէ առհասարակ եւ որովհետեւ թիւր կամ անարդար աշխատութիւնն եւս կը վնասէ ընկերական կենաց հաւատարմութիւն, ինչպէս ան աշխատութիւնը. այս պատճառաւ մարդիկ համաձայնելով իրենց մէջ յառնուն մարդկային ազգի երջանկութեան ՚ի բարելաւութիւն ընկերական կենաց և յապահովութիւն անհատական իւրաւանց, պատժական օրէնքներ իրմբ բազմաւ և հսկող մարմին մը հաստատելով նոյն պատժական օրինաց գործադրութեան իշխանութիւնը ՚ի պատահել հարկին և արգարութեամբ, նմա յանձնած է. սոյն հսկող մարմինն է՝ ազգաց վարչական իշխանութիւնը, յորոց ոմանք միապետական են եւ ոմանք հասարակապետական. սոյն իշխանութիւնը հասարակաց կենաց անդորրութիւնը անվրդով պահելու համար կը հսկէ լրջութեամբ և երբ որ և իցէ մի անհատ իւր անպարտաւորութեամբը կարօտութեան մէջ կ'իյնայ և ապրելու համար օրինաւոր եւ արդար միջոց չունենալով այնուհետեւ անարգարութեւ ձեռք կը զարնէ, այսինքն աշխատողաց արդար իրաւունքը բռնութեամբ կամ գողութեամբ իրեն գրաւելով մեծ զրկանք կը հասցունէ անհատական կենաց, որով կը վրդովի և ընկերական կենաց խաղաղութիւնը, այն ատեն նոյն հսկող իշխանութիւնը ենթարկե-

լով վերոյիշեալ պատժական օրինաց
այն տեսակ անպարտականար և ան-
արդար անձերը կը ճընէ և կը տառա-
պեցուցանէ բռնութեամբ, եւ ահա
այն ատեն անոնք որ ձանձրանալով
չէին ուղեր աշխատիլ, պիտի աշխա-
տին չարաչար տանջուելով:

Գ. Աշխատիլը պարտք է Աստուածայիւր օրինօք:

«Եւ էառ Աստուած զմարդն, և
եղ զնա ՚ի դրախտին փափկութեան
գործել զնա և պահել »:

Մենդոց Ս. Գիրքն Աստուծոյ հիւ-
նալի արարչագործութեան սիրալի
պատմութիւնը բնկէն զինի, կը յիշէ
նաեւ վերոյիշեալ պարբերութիւնը, որ-
մէ կ'իմանամք որ Աստուած երբ մար-
դը ստեղծած է նորա պարտաւորու-
թիւնը եւս նշանակած է: Աստուած
մարդկային ազգի առաջին ամօլը պար-
տիկի մը մէջ դրած է կ'ըսէ Ս. Գիրքն,
որպէս զի աշխատին և զայն մշակեն,
հետեւապէս կը տեսնեմք, որ աշխա-
տելու պարտաւորութիւնը Աստուծմէ
եւս հրամայուած է: Առաջին մարդն
իւր անմեղ վիճակին մէջ ենթակայ էր
արդէն սոյն պարտաւորութեան, իսկ
երբ պատուիրանազանց լինելով մեղքի
մէջ ինկան, այն ատեն նաեւ դատա-
պարտուեցաւ աշխատելու, այսու բա-
նիւթ է՝ «Քրտամբ երեսաց քոց կե-
րիցես զհաց քո »: սոյն դատապար-
տութիւնը շատ ծանր է մարդոց հա-
մար, քանզի խիստ ծանր աշխատա-
նաց կ'ենթարկէ զմարդ, այսու ամե-
նայնիւ սա մեծ բարիք մ'է նաեւ մար-
դոյն համար նկատմամբ նորա ծանր
յանցանաց: Բայց Աստուած որովհե-
տեւ ներողամիտ է և հայր գթած,
ուստի իւր մարդասիրական գթովն
մարդուն կրելիք դատապարտութիւ-
նը դարձեալ նորա օգտակար ըրաւ:

Աստուած կը դատապարտէ յան-
ցեալ մարդը իւր աշխատութեամբ
ճարել իւր հայր, այս որքան որ պա-
տիւթ մ'էր, ընդ նմին և կենսատու
պատուէր մ'էր անկեալ մարդուն
համար, Աստուած այս կերպով թէ
իւր արդարութիւնը ՚ի գործ կը դնէ
յանձաւորը պատմելով եւ թէ իւր
մարդասիրութիւնը ցոյց կուտայ աշ-
խարհի անկեղծն դարձեալ խնամատա-
նելով. նա իւր հայրական խնամածու-
թեամբ մարդը աշխատութեան դա-
տապարտելով, կ'ուսուցանէ նորա աշ-
նուհետեւ ինչպէս ապրիլ կարենա-
լուն եղանակը եւ երկրի վրայ բոս
կարելոյն երջանիկ լինելու միակ ճա-
նապարհը:

Որովհետեւ սոյն դատապարտու-
թենէն զինի մարդոց բարօրութիւնն
երկրի վրայ և հանգիստը իրենց աշ-
խատութէն կախումնուն էր, այս պատ-
ճառաւ Աստուած եւս շատ կէտերու
մէջ մարդիկ աշխատելու կը յորդորէ
և գործունեաց լինելու պատուէր կ'ու-
տայ: Նա երբ իւր աստուածային փա-
ռօք Սինէական լեւան վրայ իջած իւր
ընտրեալ ժողովրդի բարօրութեան հա-
մար տասնաբանեաց պատուիրանքները
արձանագրել կ'ուտայ Մովսիսին քարէ
տախտակաց վրայ, նոյն պատուիրա-
նաց չորրորդին մէջ կը պատուիրէ
դարձեալ յատուկ թէ՛ «Զվեց օր գոր-
ծեցես և արապես զամենայն գործս
քո »: որովհետեւ հանգիստը միշտ
այն ատեն քաղցր կը լինի մարդուն, երբ
նա աշխատութենէ յօգնած իւր խոն-
ջեալ և վատասկօքեկ մարմնոյն հան-
գիստ տալու պէտք կ'ունենայ, ասոր
համար Աստուած երբ կը պատուիրէ
Իսրայէլ ազգին իւրաքանչիւր շաբթու
մէջ հանգստեան օր մը ունենալ ան-
միջապէս կը յարէ նորա որ միւս վեց
աւուրց մէջ եւս մարդիկ անձանձրոյթ

աշխատելու պարտաւ որ են, հետեւաւ
պէս մարդիկ աստուածադիր օրինօք
եւս պարտաւորեալ են աշխատելու :

Նախ քան զՔրիստոս Աստուածա-
շունչ Ս. Քիրքն որովհետեւ միայն Հը-
րէից ազգին կը վերաբերէր, այս առ-
թիւ քաղմաստուածութեան լաբիւրին
թոսին մէջ թափառող մարդկային ազգի
մնացեալ մեծամասնութիւնը անգէտ
գոյով աշխատելու մասին աստուածա-
դիրօրինաց բնութեան, չէր հպատակիր
և նորա ազդեցութեանը, սակայն նա և
ազատ չէր աշխատելու պարտաւորու-
թենէն, այլ կը հնազանդէր բնական
և ընկերական օրէնքներու ազդեցու-
թեանը. սոյն օրինաց ազդեցութիւնը
մարդկային ազգը կրած է ամեն կենաց
և վիճակի մէջ, թէ նահապետական
պարզ կենցաղավարութեան մէջ և թէ
աշխարհասիրութեան հնարած աւե-
լորդ նորածեւութեանց մէջ, թէ նախ-
նի աստուածապաշտութեան մէջ և թէ
հեթանոսական կռապաշտութեան մէջ,
թէ յառաջ քան զՔրիստոս և թէ զկնի
գալստեան Քրիստոսի. Հեթանոսք հը-
նազանդած են աշխատելու պարտա-
ւորութեան, միայն բնական և ընկե-
րական օրինօք, հրէայք կամ նախնի
աստուածապաշտք հնազանդած են
նոյն պարտաւորութեան նաեւ աս-
տուածադիր օրինօք, իսկ քրիստոնէից
պարտաւորութիւնը այս մասին, ա-
ռաւել մեծ է քան զնախնեաց և քան
զամենեցուն, բոտ որում քրիստոնէայք
նոյն օրէնքներէն զատ ունին նաև նոր
և գերազանց օրէնքներ, այսինքն նոր
կոտակարանի առաւելութիւնները : Թէ
Քրիստոս իւր քարոզութեանցը մէջ և
թէ սրբազան Առաքեալք իրենց թըզ
թոյր մէջ խօսած են յատկապէս եւ
զանազան տեղեր աշխատելու պարտա-
ւորութեան վերայ : Քրիստոս որոյ
յաշխարհ գալու նպատակն էր մարդ-

կային ազդի երջանկութիւնը, այլ եւ
այլ օրինակներով բացատրած է աշխա-
տասիրութեան և արդիւնաւորութեան
օգուտն ու վարձուց արժանի լինելը .
Յիսուս կը աստեղ պարտիզպանին ար-
մատարի խլել այն անպտուղ ծառը, որ
վայրապայր տեղը երկիրը չը խափանէ
“Հատ զգա, ընդէր և զերկիրդ խափա-
նէ ”. դարձեալ Յիսուս կը յանդիմա-
նէ և ծանր պատժոյ կը դատապարտէ
սոյն անպիտան ծառայն, որ իւր քան-
քարը փոխանակ աշխատութեամբ շա-
հեցնելու և արդիւնաւորելու, գեանի
մէջ կը թագուցանէ զայն և իւր կեան-
քը ծուլութեամբ ու դատարկու-
թեամբ կանցնէ (հանէք զնա ի խա-
ւարն արտաքին) կ'ոտէ Քրիստոս, և
նորա քանքարն ալ կ'ուռայ անոր, որ
աւելի աշխատասէր է և արդիւնաւոր
կեանք ունի. աստի կիմանամք որ աշ-
խատասէր մարդիկ Աստուծոյ եւս սի-
րելի են :

Յիսուս հայրական գորովանօք իւր
աստուածային թեւերը տարածած կ'ա-
զաղակէ “Եկայք առ իս ամենայն աշ-
խատեալք ” և հանգիստ կը խոստա-
նայ իւր գրկին մէջ, ամեն անոնց՝ ու
րոնք արգարութեան համար, ճշմոյ-
տութեան համար և Աստուծոյ փառաց
համար աշխատանք կրած են : Քաջա-
լերուեցէք ուրեմն՝ ո՞վ աշխատասէր
մարդիկ՝ միտթարուեցէք և դուք ո՞վ
աղքատ և վտայեալ եղբայրներ, մի
տրանջաք որ միշտ աշխատելու դատա-
պարտուած էք, ժամանակաւոր է կեն-
ցաղոյս աշխատութիւնն ու յօգնու-
թիւնը, բայց յաւիտենական է այն
հանգիստը զոր Աստուած կը խաւա-
նայ աշխատեալ մարդկանց, միայն թէ
դուք հոգ տարէք որ ձեր աշխատանք-
ներն արդար լինին և հաճոյ Աստուծոյ
կամաց, մի ցանկաք բնաւ ճոխութեան
և փարթամութեան, քանզի նոքա մեզ

երջանակութիւն չը որարգւելելն զատ շատ անգամ մեր հոգւոյ թշուառութեան եւս պատճառ կը դառնան, և որովհետեւ «Հոգին տառել է քան զմարմինն», այս պատճառաւ մեր հոգը աւելի մեր հոգւոյ համար պէտք է լինի: Իւրաքանչիւր մարդու երջանակութիւնը իւր պարտականտարութեան մէջ կը կայանայ, ուստի ասկէջ դուրս պէտք է երջանակութիւն փնտռել, պարզութիւնն ու չափաւորութիւնը պէտք է սիրելի լինին մեզ, տեսէք Սաղոմոն ինչպէս կը խօսի իւր աղօթից մէջ Աստուծոյ հետ, «Ո՛վ Տէր կ'ասէ զիս շատ մի մեծացնէր, որպէս զի չը լինի թէ մեծամտեալով զքեզ մտանամ, և շատ աղքատ ալ մի բնէր որ մեծ կարօտութեան մէջ իյնալով քեզի դէմ չը պրանջամ»: Վասն զի ինչպէս հարստութիւնը եթէ 'ի գործ գնելու եղանակը չը գիտցուի մարդոյ հոգւոյն կը փնտսէ, նոյնպէս և շատ աղքատութիւնը՝ մարդը վերջին կարօտութեան մէջ ձգելով անիրաւութեան և մեղքի կ'առաջնորդէ. ուստի մարդիկ պարտին ժիր և գործունեայ ըլլալ, որ այն աստիճան աղքատութեան մէջ չ'իյնան և խոնարհին թշուառութեան, որովհետեւ «Աղքատութիւն զայր խոնարհեցուցանէ, ձեռք ժրաց մեծացուցանեն» կ'ասէ Սողոմոն Առաքելոյ մէջ, աշխատութիւնը նաեւ շատ մօլութիւններէ և անպատուութիւնէ կը պահպանէ մարդը, ասոր ամեն որ փորձով կրնայ համալուել, երբ իւր գատարկութեամբ անցուցած կեանքը աշխատութեամբ անցուցած կենաց հետ բաղդատելու լինի: Մուլութեան փնտսները շատ և ակն յայտնի է ամեն մարդու, «Այր գատարկակեաց՝ փեռալից բարձ է սատանայի», ասած է Իմաստասէրն. վերջապէս մարդիկ իբրեւ ճշմարիտ մարդ երկրի վրայ կեն-

ցադաւարուելու և Աստուծոյ հաճելի լինելու համար պէտք են ճանաչել իրենց առ Աստուած, առ մարդկութիւն և առ անձն ունեցած պարտաւորութիւնները և այն պարտաւորութիւնները կատարելու համար պարտին աշխատիլ հնազանդելով՝ բնական, բնկերական և աստուածային օրինաց:

Ս. Գ. Շահանան:

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԿԱՆԱՆՑ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ 11.)

Խորայելի տաան պատգամը՝ Աստուած Սոլմոնի կ'ուտայ Սինայի գլուխ քարէ տախտակաց վրայ փորագրուած, որ պէտք էր Խորայելի սրտի վրայ քանդակուէր, այս օրէնքը ու պատուէր կամ պատգամ տաան հետ է ու բնութեան օրինաց համաձայն:

Ա. Կը պատուիրէ Աստուած, որ իրմէն զատ ուրիշ Աստուած չը կայ, ու ինքը օրեւ 'ի բոլոր սրտէ և 'ի մշտաց և յանձնէ առաջին պարտքերն իս է, զի անկէ զատ ուրիշ Աստուած չը կայ:

Բ. Կուռքեր ու չափաւորութիւններ չունենաս, կամ ինձմէ զատ ուրիշ առաջնորդ կամ մեծ չը ճանչնաս:

Գ. 'Իու արձաններ ու դրոշուած կուռքեր չ'ունենաս, որ և խցի կենդանեաց, թռչնոց, սողնոց գէմքով ու պատկերով:

Դ. Սնտի բաներու վրայ իմ անունը չը դնես, ու անոնցմէ քեզի Աստուածներ չը շինես:

Ե. Շարաթ օրը սուրբ պահելու և ու գործէդ հանգիստ կենսալու ես:

Զ. Հարդ ու մայրդ պատուէ, որ
բարի բլրայ քեզի :

Է. Սի չնար :

Ը. Սի գողանար :

Թ. Սի սուտ վրայեր ընկերիդ
վրայ :

Ժ. Ինկերիդ տան, տարանքին և
ամեն բանին պէտք չէ որ յանկանաս :

Այս տար Հրամայական և արգել
լտիան որէնքը կամ պատգամը երկու
որէնքով կը լեցուի, այն է զՆոտուած
սիրել ՚ի բոլոր յանձնէ և ՚ի մտայ,
ու ընկերը սիրել իւր անձի պէս :

Հրէայք այս տաան պատգամը և
Նոտուածոյ սքանչելի անունը աղօթե-
լու ատեն ձախառնուն ու բաղկաց լի-
ւոյ կը գնեն, որ պէտք էր սրտերնուն
մէջ կրէին. այս ստահակ ու միշտ Հոգ-
ւոյն սրբոյ հակառակող ժողովուրդը
իւր վերջին հրամեշտը իւր բարի Ա-
բարչին ու խնամող Ահաբային տուա-
ւանոր անմեղ և անպարտ որդւոյ, Յի-
սուսի Քրիստոսի մահուամբ, զի այն-
քան կամակոր եղան, որ անոր ան-
հուն հրաշից, անոր երկնային ձայնին
չը լսեցին, ու անոր բարեաց փոխա-
րէն խաչ տուին անոր, լեզի ու բա-
յոխ արքուցին, որ լուէ ու չը խօսի :
Ուստի աղջիկս, և ես ոյգ անպիտան
ողդին վրայ ու չեմ խօսիր, զի անանք
իրը աւանգուպահ մեղ պէտք եղածն
մեզի տուին ու կորան, այն է ճշմար-
տին Նոտուածոյ ծանօթութիւնը, որ
՚ի ձեռն առարկելոյ առ ինք ու կը վա-
յելենք :

Սիրելի աղջիկս, երբ մեր նախա-
մօր պատմութիւնը քեզի լրի, լայիր,
խի հիմայ պիտի տանիմ գքեզ առ-
լուսոյ մայրն, որով պիտի ու բախանաս,
այս լուսոյ մայր ըսելովս չը գիտես
թէ լուսոյ սկիզբն անկէ է, այլ թէ
մեր փրկութեան ըստ այն սիրուն ա-
րեւելքէն երկեցաւ Օգարմանքով ե-

րեսս կը նայիս Հայկանուշս, ու կը աղ-
ձաս այս անարատ մայրը տեսնելու,
ու ես կը ցանկամ որ պատկառանք
մօտիկնաս անոր, որ շնորհօք զարգա-
լուած է, ու մեծ անուն կը կրէ, և
մեր յուսոյ մայրն է, կանանց սեռի
միակ և միայնակ պարծանք. երկնային
է այս, աղջիկս, քան թէ երկրային,
զի անբիւծ է բոլորովին. սուտ գեղ և
ուհայն հաճութիւն չը կայ ասոր մօտ,
համե ստութեան պսակ, հեղութեան
ակն, խոհեմութեան խորհրդաւոր խո-
րան, սիրոյ սուրբ Սինայն է նա, ուս-
տի աղջիկս անոր վրայ նայած անենդ
գիտցիր, որ նա երկնից հարսն է և թա-
գուհի յաւիտենից ընտրեալ. մօտիկ
ցիր այս մօր, որ անմեղաց բարեկամ
է և մեղաւորաց վթառ ձեռնառու.
սիրող որբան սուրբ է, այս Սարիամ
այնքան վճիա կը տեսնես, ՚ի մեզս որ-
քան թաղուած ես, այս Տիրուհին այն-
քան օրապիր կը տեսնես, ու բն մի փա-
րիր անոր, ու խառն զանի սիրելու,
յարգելու այնչափ, որչափ վրայ է
աւտուածամօր մը :

Այս մարդը կոյսը մարդը ծնու-
ղաց զուակէր Յովակիմայ և Ննույի,
որոնք բղձակաթ ու խալիք զուակ մի
կը խնդրէին, ծնաւ այն պատուական
մայրն Ննա զպատուականն Սարիամ.
անաւ այս կոյսը մօր մը խնամոց տակ,
ու խալի զուակ լինելու յանձնուեցաւ
Նոտուածոյ խնամոյ. այնքան գերա-
զանց եղաւ հեղութեան, խոհեմու-
թեան և սուրբ սիրոյ մէջ, որ երկնից
Հարդ որդեց, որ իւր Վանը անկէ
մարմնով ծնի, այն Սիամինը, որ աչ-
խարհիս փրկիչն է ու Նոտուածոյ յա-
ւիտենական որդին : Տես, սիրելի աղ-
ջիկս, տաան եւ չքս տարու էր,
երբ Նոտուածոյ հրեշտակ զմոյցուն գե-
ղով անոր կը մօտիկնայ Նոտուածոյ հը-
րամանին հաճութիւնը ա՜յս սրտէն

ու չլիժանց ընդունելու . տես հանձարաւորն ինչ զգուշալիներհունկեր տիւ կը արատարխանէ , հրեշտակը ուրախ լեր բերկրեալդ , տէր ընդ քեզ կ'ըսէ , նա կը փախնայ որ չըլլայ Լուայի հարուածը կրէ , այն որ Լուայի ցաւ տխտի բուժէր . երբ հրեշտակը կը պրնէ գէր մի երկնայր Սարիամ , զի գտեր շնորհա առաջի Մտուծոյ , ահա յըզրացիս և ծնցիս որդի և կոչեացես զանունն նորա Լամանուէլ . սուրբ կայսր աւելի կը շփոթի , ու կը հարցնէ , թէ ուսալի լինիցի ինձ այդ , զի զայր ոչ գիտեմ , այս կատարեալ հարցման կատարեալ պատասխան մը կ'առնէ հրեշտակապետէն . Հոգին սուրբ եւ կեայէ ի քեզ և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քս . զի որ ի քէն ծնանելոցն է սուրբ է եւ որդի Մտուծոյ կոչեցի . տես , Տիրուհին , անհամեմատ կայսր ինչպէս կ'որոշէ « Լիզիցի ինձ բառ բանի քում » Աւ այս հեղիկ բաղձանաց մէջ փրկութեան սկզբնաբարը դրուեցաւ :

Եւս անմեղ կայսր յղի գտնուեցաւ սուրբ Հոգիէն , այն է մարդկային որ և իցէ ախտէ ազատ , ու անձաւելի կերպով ծնաւ զիւր անդրաշինկն Յիսուսը , Եւթիկէնէ միայրի մէջ , այս յեալին խեղճութեան մէջ կը ծնի բարձրելոյն Մտուծոյ որդին . խանձարուրի մէջ կը պատի ախեղերաց օրէնք տուողը՝ ու մտուրի մէջ կը գըրուի երկնից փառաց տէրը , ու կենդանիք կ'ունենայ իրեն քով սերտիւնից վրայ բաղմաղը . ահա մեր փրկիչ ծնունդը այսպէս էր սիրելի ազգիս , մէկ եղսիան սիրտ մի կար իրեն մօտ , մէկ սուրբ կաթ մի կար իրեն անունդ , որք սուրբ ժպտով ու սուրբ կրպով կը դիւցնէին զայն՝ որուն ձեռքներ և իւր կեանքը , կը սիրեն զայն , որն արդէն նորա սրտով յարգելով նորա որդի լի

ներու հաճած էր . սիրելի Հայկանուշ , երբ մուծ այր մը լուաւորուած տեսնես , մէկ նորածին , բայց շատ սիրուն մանուկ մի տասն և հինգ տարու մօր մը և կուսի մը կուրծքին վրայ իւր դէմքը դրած անուշ և սիրուն վտակէն քաղցր և զուտ կաթ կը ծծէ , ու պարզ ծերուկմն ալ իւր ցուպին յենած սկսով զմայլած կը զիտէ այն մանուկը , որ յաւիտենից է , կը դիտէ այն մայրը՝ որ կոյս է , կը դիտէ և զինքն որ Հայր է անհաղորդ :

Եւս տեսարանը Հայկանուշիս գիտեմ շատ սիրելի է այն , կը ցանկաս որ ականերեւ տեսնես ու վայելես , բայց մտօք մինակ կը տեսնես , հագւոյդ միայն բերկրանք կը լինի :

Եւս շնաշխարհիկ մայրը իւր որդին խնամեց , որքան որ պէտք ունէր , և որքան որ աւետարան յցուցած է , երբ ուզես լիովին գիտնալ պէտք է աւետարան կարդաս , ես խիստ համուռօտ կը խօսիմ , զի աւետարան կենդանի և երկնային ձայնով կը ծառէ , ինձ պէս տկարի մը բերնէ չէ : Երբ երեսուն տարուան եղաւ Յիսուս մեր փրկիչ՝ Յորդանան լճաւ անապատի մարդէն , Մտուծոյ բանի Կարապետէն , ամբողջոյն Յովհաննէսէն մը կըրտուելու , Յովհաննէս կը հրաժարի անմեղը լուսելն , Հայրը կը ձայնէ երկինքէն , դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ , ու Հոգին Սուրբ աղաւնաւ կերպ կը հանգչի Մտուծոյ գառին վերայ հօր ձայն հաւաստելու և որդւոյն Մտուած լինելն վկայելու , մարդկանց մեղք լուացողն ջուրէն կենէ միշտ անբիծ , քառասուն տիւ և քառասուն գիշեր կը պահէ լերան վրայ ու աստ կ'անօթնայ , ստտանան ալ կը մօտիկնայ Միամայր սրբ կողովող դուրը կուզէ Մտուծոյ Մտուածութիւն և մարդկային աղաւտութիւնը գոյնալ

կը խորձէ ուղտը կըսէ, չուղտը կը լսէ, սիրտ 'ի խոց կը կորնչի. Յիսուս աչ խորհ կը մտնէ առաքեալները կը ժողովէ, հիւանդները կը բժշկէ, կոյրեր կը լուսաւորէ, կաղերուն ոտք կ'ուտայ, խուլներուն տիւնջ, համբներուն լեզուն կ'արձակէ, մեռեալներուն կեանք կուտայ. աղքատաց սիրտ, չարերը կը հարուածէ, բարիները կը խորախուսէ, բարոյական կը խօսի, սուտ օրինապահները կը յանդիմանէ. վերջսպէս իւր պաշտօնէից՝ որոնք իրեն Հօր կրօնից նախանձախնդիր էին, նախանձը կը շարժէ, անոր մահուան խորհուրդ կը խորհին, այն որ խորայնից աւ կը բառնար, անոր կեանք կ'ուտար, անոր կենաց թախարթը կը լաւեն վատ հրէայք, վերջապէս կը մատնեն ու խաչ հան զգա կ'աղաղակեն Պիղատոսի ատենի մէջ, ու նա արդարութեան դէմ վճիռ կուտայ, անմեղը կը դատաւարտէ, Քրիստոս խաչէն կը կախուի, արեւ կը տեսնէ իւր տէրն 'ի խաչին կը խաւարի, երկիր կը տեսնէ իւր արարիչն 'ի խաչին կը դողայ, կը շողովի, իսկ Հրէայք, Քահանայապետներ եւ Փարիսեցիք միայն իրենց յաղթանակի վրայ ուրախանալով դըրուի կը շարժեն, վա՛հ կը կարգան, ու կը լսեն թէ ո՞ր Աստուծոյ որդի է ատիկայ հիմա խաչէն կ'իջնէ, կը տեսնանք ու կը հաւատանք ու նա խաչին վրայ իբր կարօտ յամենայնի կը կուգէ, ծաղաւի եմ. ու երբ ամէն բանը, որոնք մարգարէք անոր անպարտ մահուան վրայ գրած էին, լեցաւ, մեծ ձայնով կը կանչէ ու հոգին հօր Աստուծոյ ձեռք կ'աւանդէ, ինքն 'ի զը ժոխս կ'իջնէ նախահարց եւ նահապետաց ակնկալութիւն, դժոխաց նիգելը կը խորտակէ, գերիները որոնք որ իւրն են, կը կորզէ յաղթական գրօշակով, յարութիւն առաւ, իւղարբեր եւ

սուրբ կանանց երեւեցաւ, մատաւան առաքելոց հետ նստաւ ձուկ եւ հաց կերաւ յարութենէն զինի, քառասուն օր մնաց եւ ապա Չիթենեաց լեռան վերայէն աշակերտաց ներկայութեամբ համբարձաւ իւր յաւիտենական փառաց Հօր քով, ուրիշ առաքելց Հոգին սուրբ, որ լոյս զառաքեալս եւ խելամուտ քաւ զանոնք, թէ ինչ բանի հետեւած են ու իրենց սրբազան կոչումը ինչ գերազանցութիւն ունի, ու իրենց լուսատու պաշտօնը ինչպէս պիտի 'ի կատար հանեն:

Այս լուսոյ վտակէն բոցավառեալ Առաքեալները իւրաքանչիւրն գերքան զկար իւր քաղցին, ուսուցին, եւ 'ի կեանս կուեցին՝ որոնք սիրով լսեցին երկնից հրաւերը, յաւիտենական երջանկութեան ձայնը. յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն սրբոյ մկրտեցին, ու անոնք որ մկրտուեցան, Հօրն երկնաւորին սրգելի բեղան, Յիսուս Քրիստոսի ժառանգ եւ ժառանգակից ու Հօգւոյն Սրբոյ օթարան. սիրելի Հայկանուշ, քեզի միշտ ջնձ բսեր, թէ երբ սիրող սուրբ պահես, Աստուած, Ամենասուրբ երրորդութիւնքու միջ կը բնակի եւ դու անոր հովանեաց տակ: Այն սիրուն Առաքելոց, մեր վերածընդաց յաջորդեցին հետեւորդք Առաքելոց, եւ անոնց՝ Արեւելոց Հարբ, եւ Հարց որբոց՝ Հայրապետք կամ կութութեան իտոք, ու բովանդակ եկեղեցւոյ ատրիճանաւորք: Քրիստոս եւ իւր առաքեալք փոքրիկ խումբ մի ունեցան՝ որք քրիստոնեայք կամ Քրիստոսի հետեւողք ըսուեցան. այս քրիստոնեայք իրենց զլուին ունին կենդանին յաւիտենից զՅիսուս Քրիստոս, այս հաւատացեալք ուրիշ անուն մի ալ ունեցան, որ է Արեւելոցի, զի օր քան զօր հաւատացելոց բազմութիւնը կը շտանար, ահա ալ լինաւ,

մենք ալ այս սուրբ բաղնաթեան մէկ
անգամն ենք ու մեր գլուխ և առաջ
նորդն է Յիսուս Քրիստոս քահանայա-
սէտն ճշմարիտ, Հօրն երկնաւորի ծո-
ցածին, Հօգւոյ էակիցն և յիսուակի
ցրն : Եւստի կուզեմ մինչեւ հոս հաս-
նելն զկնի նորէն դառնալ բեղն հետ,
այն անմեղ գաւի Մողգոթայի բերան
վրայ, այն անպարտ խաչի պատուան
գանի տակ կայնել, ու աչաց վրակ-
ներ այն ձեռքի, ռաւոյ, կողի բոսոր ա-
բեան առաւակաց հետ խառնել, ու
նայն խաչեալ Ղ'ստուծոյ խնդրել, թէ
ով անկործանող և արեւնիաող Տէր մեր
Յիսուս Քրիստոս, ինչ բան ստիպեց
զքեզ, յայտ կամուրք անարգանք և
ի խաչ. ինչէն կրտսիպուիս այս դասն
մահուան բաժակը խմելու, չէ որ դեռ
երկոյցին քոյ երկնաւոր Հօրք կ'աղօ-
թէիր, Հայր անյոս յինչն զբաժակս
այտ Հայկանուշ պիտի լսես ինձի հետ,
այն վուշ պատկէն վրաւորուած ու
ճանրացած և մէկ թելի վրայ կրթնած
գլուխէն սոս անուշ ու սրանչելի ձայնը
թէ քո սիրուն համար, զքեզ փրկելու
համար կը կրեմ այս խաչն և մահ. Հօրս
վերջին ազօթքիս սրտաւախան անգամ
այն եղաւ թէ մարդկանց դատապար-
տութեան դատակնիքը ոչ ինչ բանով
չի լուծուիր, եթէ ոչ քո անմեղ պա-
տարագաւ և խաչի մահուամբ :

Սիրելի աղջկիս, կը տեսնես մեր մար-
դասէր փրկչի անհամեմատ սէրը, կը
տեսնես անոր առ Հայր սուրբացած հա-
ւատարմութիւնն և առ մարդ ցոյս-
ցած գութն և սէրն, զի մահով զմեր
մահը կը խախտէ, ու իւր յարու-
թեամբ զմեզ նորէն յանմահութիւն
կը նորդէ. հապս սիրելնք այս մեր
փրկիչ, մեր Արարիչն և մեր կենաց
նորոգութիւն տուող Յիսուսը, այն
սիրենք ու թէ որ հարկը ստիպէ մեռ-
նինք ի սէր նորս. նազելի աղջկիս,

անոր խոտրեր այնքան քաղցր է, որ ոչ
մէկ բան անոր կը հասնի. այնքան սի-
րուն են որ ոչ մէկ սիրելի իր մը անոր
հետ կը համեմատուի, այնքան բնոր
են, որ ոչ արեւ և ոչ ուրիշ մէկ լոյս
կրնան այնքան լոյս արտադրել. թէ որ
կարդաս Աւետարան, անոր սուրբ
ճաշակը առնես, կիմանաս ու ինձ
կարօտ չես մնար :

Պիիստիայք շնոցնող, իմաստունք
ապշեցնող, Առաքեալներն բերկրեցը-
նող որբերն երջանկայնազ, աղքատաց
յոյս տուող, մեծատանց չափ և սահ-
ման հասանող Յիսուս իւր ամենի-
մաստ հանձարով այս ոսկեղենիկ տա-
ռերը դրոշմեց բաւանդակ մարդկու-
թեան սրտի վրայ, որ թէ եւ առաջուց
կար, բաց հիշցած և անիմաստ կե-
րուէր, թարգմանեց, այն է ինչ որ
կուգէք մարդիկ ձեզի բնեն, այնպէս
բռէք և դուք անոնց : Թէ որ այս կարճ
ու աղքատ բանը ի միտ սենեկաս սիրե-
լի աղջկիս, երբէք կենացդ մէջ ոչ մէկե
մը տրտունջ կը լսես և ոչ մէկի մը ցաւ
մը կ'սպասեմուես, աղ միշտ պարտքդ
ու իրաւունքդ կը ճանչնաս. այս պար-
տուց և իրաւանց մասին զատ պիտի
խօսիմ :

Արբ մայր մը իւր ընդհանրական
դատարարակութեան դասը իւր սիրե-
լի Հայկանուշին վարդէն ու շուշա-
նէն սկսի, ի հարկէ իմ գրածիս պէս
խիստ աղքատ կը լինի. իսկ երբ ծո-
ղէն, մարդէն, երկինքէն, յասանդաց
սկսի, ձօխ և հարուստ կը լինի. միտակ
թէ համար տոյ և համար առնէ, ա-
նոր մատղաշ ու վախճակ ու զննելի վե-
րայ տպուորէ ինչ որ սուրբ է և
ընդհանրական. ինչ որ անմահ է ու
անկործանելի, որ հոգւոյն հետ գե-
րեզմանի թաւքէն կրնայ անգին թըռ-
չիլ :

Ար խնդրեմ խափկին մայրել են,

ու պատուական քայրերէն, որ ներս
դաժիտ իննին ինձ իրենց մէկ հարուստ
կրօնախօսութիւն մը և ազգավէպ չի
պատրաստելուս, այն պիտի ներեն, զի
շատ տեղ կարեւորն անգամ անձուկ
կերպով թողած եմ, ոչ թէ առանց
գիտելու. նախ կրօնախօսութիւն մա-
սին կրտսմ, ունին սուրբ գիրք, ու ե-
կեղեցական պատմութիւն եւ Հարց
սրբոց գրուածներ, թող անոնց վրայ
որոճացնեն իրենց անմեղ գաղափարնե-
րն, ու նոյն պէս աղգային պատմութի-
ւեան համար պէտք է շարք մատե-
նագրաց աղգային պատմչաց ունենան
և անոնց վրայ վարժեն իրենց սիրուն
գաւակները:

Կամայ կամայ կը հասնիմ այն տեղ,
որոյ կը ցանկամ, ինչպէս ալեկոծու-
թենէ մազապուր սղատողը նաւա-
հանգստին, այնպէս և ես եմ խօսի նը-
պատակին, այն է ընդհանուր դաս-
տիսըսութեան երկրորդ մասին, որ
կը հիմնի 'ի վերայ պարտուց և իրա-
ւանց մարդկան: Այս սիրուն դասը
այս սրանչելի բարձր համարը դար-
ձեալ մարց համար է իրենց որդւոյ
տալու, իրենց որդին իբրեւ ճշմարիտ
մարդ ընկերութեան անդամ կարգե-
լու, ու նուիրական վն հանձնութեամբ
ձեռքէն բռնելով մարդկութեան և
Աստուծոյ տալ և պարձանօք ասել, ա-
հա մարդկութիւն, բեղ անդամ մը, որ
իւր պարտքը գիտէ և իւր իրաւունք
կը ճանաչէ. ահ, ով Աստուած, բու-
ննձ տուած զաւակը քոյ կոմայ հա-
մեմատ մարդ, կրօնքով, խնդով և ա-
ռաքինութեամբ զարդարուած, ես
իմ պարտաւորութիւնս կատարեցի,
ու դուքու շնորհաց մէջ աւելի զար-
գայուր:

Ինչպէս որ կրօնքը անհրաժեշտ պարտ
մի է մարդկանց համար, նա մանաւանդ
ճշմարիտ կրօն մը, նոյնպէս անհրաժեշտ

է բարի ըլլալ ու ընկերութեանց մէջն
վնասակար արմատները կը թուլթեամբ
և ոչ թէ ուրիշ բանով ցնջել, մարդ-
կային ուղիւնսը նախ և առաջ մէկ
ընկերութիւն մի է, որուն մէջ տար-
բեր իրաւունք չի կայ, այն է մարդ բա-
ռին տակ ոչ կին կայ ոչ էրիկ, մարդ
է կին, մարդ է և այլն, աւելի մեր
ձաւոր և իւր հարապատ անուն ունի
այն է բանաւոր. այս ընկերութիւնը
որ և իցէ եղանակաւ չընանկացնելու
համար պէտք է բարի ըլլալ. ասոր հի-
մը չար մարդիկը կը շարժեն, ու բա-
րի մարդիկը կը հաստատեն, որ և ի-
ցէ մարդէն չովնասելը կը պահանջուի,
ու նոյնպէս որ և իցէ մարդ իրաւունք
ունի իւր վնասը խնդրելու. արդա-
րութիւն միշտ արդարութիւն է թէ
կրթեալ դահճաց մէջ և թէ անկրթ
յուզիւհարաց խրճիթի մէջ:

Մարդկային ուղիւնսը պինտ առաջ
երկու հակադիր և միշտ իրարու կարօտ
ընկերութիւն կը բաժնուի, որոյ երկու մեծ
ձիւղն են իրենց սեռի և ոչ կարծեաց
բաժանմունքով, այն է իգական սեռ,
կնիկ մարդ, արու սեռ, էրիկ մարդ.
այս բաժանումէն զկնի կը բաժնուին
նորէն մարդիկ, գիւղացի երկրագործ,
քաղաքացի արհեստաւոր, ու շատ
մի իրենց սեռի տակ ստորաբաժա-
նումներ կ'ունենայ մինչեւ ընդհա-
նուր մարդէն կիջնէ մէկ մարդ կամ
մէկ անհատ. իւրաքանչիւրի իրաւունք
և սրտոքք մի և նոյն չափն ունի եւ
կշիռ ոչ աւելի ոչ պակաս. ուրեմն ես
իրաւունք ունիմ իմ ընդհանրական
դատաւարակութեան մէջ կանանցը
սեւ բարի կանայք պէտք է որ լինիք,
զի ես բարի կանայք եղիք ըսելով
չեմ հետեւցնէր թէ չար էք, այլ թէ
բարի ըլլալու սրտոք ունինք, ուստի
պէտք է, որ բարի ըլլանք, ահա այս
դրութեանս վրայ սխալ հիմնեմ իմ

մէկ քանի խօսքս և ապա վերջ տամ, տնտեսական, ընկերական և ընդհանրական դաստիարակութեան:

Կանխաւ ըսած եմ, դաստիարակեալ պատուական մարց պարտական է աշխարհս, զի բարեմասնութեանց քաջ երկրագործներն են նորա, որ մեր սրտի կորդութիւնը կը փշրեն, կը հերկեն, ու կրօնի եւ առաքինութեանց սուրբ սերմը կը սերմանեն ատոր ու արդիւնաւոր պոստղներ բերելու համար, իսկ ատոր հակառակ անկիրթ և անդաստիարակ մարց աշխարհիս հասուցած վնասը անթիւ է, իրենց սիրուն զաւակները, որոնք շատ կարելի էր որ սքանչելի և համբաւաւոր մարդիկ լինէին, եթէ իրենք դաստիարակեալ ըլլային և իրենց զաւակաց դաստիարակութիւն տային, փոխանակ մօլութեանց: Ահա այս ցաւէս էր, որ ձեռնէրէց եղաց խօսելու, հասարակաց դատման գնելու իմ աղքատին խօսքերս. անհնար է, քաջ գիտեմ որ ամենէն ընդունելութիւն գտնէ, ու քմծիծաղ չըլինի ըսողմաց, բայց իմ խնդրածս աննկատէ չէ, այլ այն սրտերէն՝ որոնք պիտի վազը ինչ օգուտ քաղեն եւ զգաստանան. եթէ սոյն ըսողին հանդիպիմ, այն է որ թշուառ կենացս մէկ քանի ժամեր ՚ի զուր վատնած չեմ ըլլար ու թափառող դատարըս արժէք մի կունենայ: Այս պաշտպան անյարմար քանի մի տողս իբր տւելորդ, բայց ոչ անարատչած գրելէս զինի, կը փութամ բարոյական կենաց վնաս խօսիլ սիրելի մարցս հետ, պատուական քերցս հետ, ու քնքուշ օրիորդաց հետ, թէ ի՞նչ է առաքինութիւնը, և ի՞նչ կրնէ մեզ, որ ընդհանրական դաստիարակութեան երկրորդ մասն է: Այն կինը որ յաւաքիքինութեանց զուրկ է, անդաստիարակ է, այն որ անդաստիարակ է, կա-

տարեալ բանաւոր չէ, անասունէն քիչ տարբեր է: Հասարակաց կրթութեանները թէոր բարիք մի պիտի տան մարդկութեան, կանանց աղնիւ և գեղեցիկ սեռը ՚ի կրօնս և յառաքինութիւնս ձուլելու են, և ոչ թէ ուրիշ բանի, զի Հայաստան այն այրի եւ խեղճ Հայաստան ամենէն աւելի մօր կարօտ է, մօր կրտսմ և ոչ թէ անասունի պէս բնական մղման տակ ապրող մօր, որ ծնել ու կամ թաղէն ՚ի զատ ուրիշ ոչինչ գիտէ և ոչ իբրեւ պարտականութիւն կը կատարէ. ես չեմ մեղադրեր, այլ կը ցաւիմ. այս աղէտալի վիճակի մէջն է մեր խեղճ Հայաստանը, չի գիտեր ի՞նչ ուսուցանէ, իրեն իրաւանց եւ պարտուց անտեղեակ է, ինչպէս իւր զաւակի սրտոք և իրաւունք ճանչցնէ: Այլ բեր, ՚ի սէր մեր պատուական մօր, որոնք որ կղզան և կիմանան թէ ինչ է մարդ և ի՞նչ է մարդկութեան սահման, թող ձեռք ձեռքի տան և իրենց ընտիր սեռին արատ բերող մայրերու թիւը ընկերական դաստիարակութեամբ թէթեւցնեն, անշուշտ օր քան զօր մարդիկ առաջ կ'երթան, այս առաջ երթալու մէկ հատիկ միջոց խրախոյսն է ներկային համար, յոյսն է ապագային համար, որով կը քաղեն. ո՞չ մենք կը քնանանք, չէ որ մենք ու մարդ ենք, ու իբրեւ մարդ իրաւունքն իս կը պահանջենք, պէտք չէ որ սրտաքերնիս ալ վճարենք. բանն հոս է, թէոր սրտոքերնիս անթերի կատարենք, այն է որ ոչ ինչ պակաս կը ձգենք մեզ և մեր ընկերին, իսկ երբ պարտադանց կը լինինք, այն է որ ոչ ինչ գործ տեսած կը լինինք:

՚ի դհանրական դաստիարակութեան երկրորդ մասին մէջ, սիրելի մայրերս ու պատուական քոյրերս, զանազան շուրքեր ու ձախութիւն ունին,

որք էրիկ մարդկանց քիչ պէտք ունին ,
ինչպէս էրիկ մարդկանց շուք ու փառք
եղող մասը կանանց քիչ պէտք ունի :
Պարզենք քսածնիս , էրիկ մարդ մը պէտք
է անվէհեր ու տրի սիրտ և ոգի ունե-
նայ իր անձին , իր ընկերին և իր հայ-
րենեաց պաշտպանութեան համար :
Կին մը ասոր պատասխանող ձիւք պէտք
է ունենայ , սիրալիր սիրտ , ողջախոհ
ոգի , ընկերը և անձը սիրելու համար
ընկերութեան կապը սուրբ պահելու
համար և հայրենեաց անունը շքե-
ղազարդելու համար :

Երիկ մարդ մը պէտք է արդար ըլ-
լայ իր մէջ , արդար ըլլայ ընկերին հա-
մար , արդար ըլլայ օրինաց սաստեհ ա-
զատելու համար և արդարութիւն ու-
նենայ միշտ իւր բոլոր գործառնու-
թեանց մէջ , կին մարդը խոհեմ պէտք
է ըլլայ իր մէջ , խոհեմ ընկերի դէմ ,
խոհեմ ընտանեաց մէջ , խոհեմ և հայ-
րենեաց փառքին համար : Էրիկ մար-
դը պէտք է վերջապէս բովանդակ ա-
ռաքինութիւն ունենայ , ու կին մար-
դը պէտք է զանոնք բարեխառնէ . ես
երբեք չեմ ըսեր կին մը իւր հայրե-
նեաց , իւր կրօնին և իւր անձին հա-
մար երկուստ ըլլայ , արիութիւնը մեր-
մէ , չէ , այլ թէ ըստ պատշաճի և հար-
կին համեմատ . ո՛ր կրնայ վատարա-
նել պատուական Աստուծոյ հայրենա-
կան ցեղի վրայ ունեցած սերը , սրով
արիացաւ գործել , ինչ որ մնչեւ աշն
օր թաղուհի մը ըսած չէր , ո՛ր չը պաշ-
տեր սքանչելի Յուդիթայ հայրենասի-
րութեան և աւանդին արիասիրտու-
թիւն , ինչ մարդ ըլլայ , որ Շամուհէի
գիրքնական աւանդապատմութիւն դա-
տափեալ , ո՛ր է այն վատը որ Շուշա-
նի ողջախոհ արիութիւնը ծաղրէ , մեր
ն սխարար այ գիցուհի սրբասունչը ար-
դէն յայտնի են մեզ . այն Տարոնայ Ար-
րիանէն միթէ քիչ զիւցապնական քա-

ջութեամբ թռաւ յերկինս , տանց վը-
րայ կը փոշի հաւատք , խղճի ազա-
տութիւն և առաքինութեանց բոլոր
երջանիկութիւնք : Ի՞մ ջանքս ու խնդի-
րս այս է , որ Հայուհիք , պատուական
տիկնայք ու ազնիւ սերունդը իւր
նոխնի տղնուութիւնը աւելի վսեմ փայ-
լեցնէ , երբ պիտի տեսնեմ մեր տիկին-
ներու սիրտը ճշմարիտ վայելութեան
վրայ դարձած , ու երբ այն Հը-
ռովմայեցի մեծ կնոջ պէս պիտի լը-
սեմ մեր մայրերէն , երբ հարցուի մեր
է դարդերդ տիկին , անոնք անոր պէս
ըսեն , քովերնիս է . երբ նորէն կրկնեն
մեր է տեսնենք , անոնք իրենց բոլոր
տիք շարուած զաւակներու պարկեշտ
կրթութիւնը ու սիրաւառ սիրտեր
ցրցեն , ճշմարիտ վայելութիւնը իւ-
րականին մէջն է և մէ թէ մաքայկա-
նին , ըսել կ'ուզեմ , այն մայրը , որ իւր
բոլորտիք լեցուն կրթեալ ու սիրուն
զաւակներ ունի նա շատ զարդարուն
է , քան այն կինը որ կը ծփայ ազա-
մանդի մէջ ու իր զաւակը հասարակաց
զգաւանք կը պատճառէ և իրեն ամօթ
կը դիզէ : Այս յայտնի ճշմարտութեան
դէմ , մէջ որ կը մաքսուի , ուստի և ես
երկարել չեմ ուզեր : Իւրաքանչիւր կին
ի հարկէ կրմանայ թէ պատիւը ի՞նչ
է կնոջ մը համար , կինը ի՞նչ է մարդ-
կութեան մէջ , երբ ուշի ուշով ու
նուրբ մտածէ , կը տեսնէ թէ կնոջ մը
պատիւը իրիստ անգին է , ու կնոջ տե-
ղը մարդկութեան մէջ բարձր է , այն-
քան որքան մեծ է անոր պատիւը :

Երգեօք ալիքաւան ու ճօրան պի-
տի մուշնամ ու այս ընդհանրական
Վաստիարակութեան մէջ վրան պիտի
չը խօսիմ , այն պիտի խօսիմ և աւելի
ուժով հոս պիտի խօսիմ , զի մեր պա-
տուական Մարց և Քերց պատիւը ա-
ռաթուր տապալեց , իրենց ծանր փոր-
կը ու ինչ գնի տակարկութեան դրու-

խնայել, լուսնի զինքն է լուսելով ծաղր
կրնեն, կրխարեն, ձեռքեն կրհանեն
ուրիշին կը ծախեն. այս մեծ բանը
վարկը և պատիւը կանանց մինչդեռ
Լուսնայան աւելցնել կուզէ և որ քան
զոր զայն ունեցողը կը մեծարէ ու
կը պաշտէ: Սէր, մեր մայրերն ու
քոյրերը անոր արժէքը առ ոչ ինչ կը
համարենք, չէ և չէ ձեզ կ'ըսեմ,
ձեր ծանրութիւնը ձեր ծանրագին
պատիւն և վարկը ամանի մի ծախէք.
Տօբան կը փոխուի, իսկ երթացած պա-
տիւն աչ երբէք. լսթին ներկին ճար-
մանդներուն ուրիշը կը յաջորդէ, իսկ
վարկին չը կայ ուրիշ մը, որ յաջորդէ:

Հիմար են այն կամակոր մարդիկ, որ
Տօբայի վնասութեք հետեւանքներն ա-
ռանց զգալու միշտ նորա էտեհն կեր-
թան. այդպիսեաց տունը աղան կամ
անագան կ'անկանի և կը կործանի: Չը
կայ մէկը, որ առանց խղճահարութե
ձեռքը կուրծքին դնէ, ու կը վկայէ թէ
Տօբան երբէք ինձի վնասած չէ, իմ տու-
նըս կ'ախ բերած չէ, իմ ընտանեկան
խաղաղութիւն վնասուած չէ, նոյն իսկ
մօտայէն շահ քաղողը արդեօք խա-
ղաղ կեանք ունի, պարկեշտ ընտանեօք
կ'ապրի, թէ որ կայ ես այս ամենը
սանկերս յետ կ'առնեմ, իսկ եթէ ոչ
կ'աւելցնեմ այս քանի խօսքս ալ ա-
ռանց չափազանցութիւն համարելու:
Ինչ չարիք կայ արդ՝ որ մօտան չըներ.
ով որ մօտայի գերին է, Աստուած չի
ճանաչեր պարզապէս, բարոյական
չունի խիսապէս, մարդ չէ, գերի է, այս
է իւր բովանդակ ջանկը հանդէս:

Ով աւելի սիրահար է մօտային. —
կանայք. Եւ տաւիլ թեթեւ սօխկ են
այս դարուս մէջ. — կանայք. ուրեմն
տաւիլ վատթարացած է կանանց վիճա-
կը: Այո՛ շատ վատթար է կանանց ար-
գի վիճակը, ես կը ցաւիմ իրենց խեղճ
անդգայ մըլութեանց մըլայ որ և ոչ

ինչ վայելութիւն մը կը վայելեն, իցիւ-
թէ վայելին և ոչ թէ մօտային, չը-
սեմ սատանային ծառայէին. սակայն
իրենց կամքը ազատ է, ուզեն լուս-
լան, ուզեն գէշ, ով կարող է իրենց
դպչիլ:

Ազատ բառը նախ ինձ համար նը-
շանակութիւն չունի. քանի որ անոր
բուն նշանակութիւնը կորսնցուցած
են. երկրորդ՝ այն ազատութիւնը՝ որ
հասարակաց հանգիստը կը խանգարէ,
չար է. ուստի և ես չարը պախարա-
կելու իրաւունք ունիմ: () Երէքի տակ
բարի քաղաքացին է ազատ. նոյնպէս
բարոյական տեղ գիւղացին, և թէ մէ-
կը այսպէս չէ համոզուած անոր ազա-
տութիւն երեւայական է և ոչ թէ ի-
րական. մոլութիւնը ուստի կը վնասն
եթէ ոչ ազատութիւն չը յարգելն,
ընկերի իրաւունքը չը ճանաչելն, ու
իւր սրտուսը մէջ թերի գտնուելն,
խօսքս չեղբարակած այս քանի խօս-
քսս ալ խօսիմ և ասքս վերջացնեմ.
մեր Աղբի նկատմամբ չէ միակ խօսքս,
այլ տաճկաստանին ու բովանդակ
տաճկի երկրին է:

Այսօր տաճկաստան յետին չքա-
ւորութեան մէջ է, այսօր տաճկաս-
տան անօթի է, այնպէս անօթի է որ
տեղէ մը յայտ չունի հոց մը ընդունե-
լու. այս խօսքերս զգալի ընելու հա-
մար շատ խօսքի կարօտութիւն չը կայ:
Սէր արդի քիչ շատ սովէն դիմանալ
նիս երկու պատճառաւ է. նախ եր-
կիրնիս բնականապէս արդիւնաւոր է
ու աման գնով կը գնենք կամ կուեն-
նամք, կուտենք, ով որ խ'էք ունի,
ունենալ ինչ կը նշանակէ, կ'իմանայ,
իսկ ով որ խորհելու կարողութիւն
չունի, անոր համար պարզ ալ ըսեմ՝
դարձեալ ոչ ինչ պիտի զգայ. բնակա-
նապէս ըսի երկիրնիս արդիւնաւոր է,
զի մինչև ցորդ Լուսնայից ներհան

երկրագործական ուժով ոչ մէկը վարեց, ոչ մէկը ցանեց եւ ոչ մէկը քաղեց, թէ որ Աւրապիոյ մօտան կը սիրենք որ տուններնիս կը քանդէ, դէթ անոնց խելքն եւ անոնց փորձառու հանձարն ալ սիրենք, որ աւերակնիս շինենք, Աշխուրդ՝ սակորնիս հասա է, որով կը գիմանանք, ըսել կուզեմ՝ հայրենական տուն, կառուած, պատրաստ դրամ ունէինք մինչեւ ցարդ անձայն կերանք, Աստուած ողորմած է ըսինք քնացանք, ու ոհա կարթնանք պարապութեան մէջ, անօթի ծարաւ, արհեստնիս չի բանիր, կնիկնիս մօտայի կը վազեն, դըրամ կուզեն, տունը ալ-ֆռանկայ կը սողեն, առաջ թէ որ օրը երկու արծաթ մէծիս կը բաւէր տան ծախուց, հիմա հինգ եւս կը պակտի։ Անոնց ամենուն պատճառը նորասիրութիւնն է, ուստի երբ որ մեր Աղբը եւս նորասիրութիւնը թողու, այս աւմենը կ'անհետին եւ այն ժամանակ միայն կարելի է յուսալ մեր Աղբին համար յառաջագիմութիւն։

Ա. Պ. Վ.

Ա Ռ Ղ Ջ Ա Կ Ա Ն

(Շարունակութիւն, տես թիւ 11.)

Յանկութեան կիրքը, որդեակեր իմ, անխոհեմ եւ չար սէրը, որ սէր կուռեւրու արժանի չէ, այս ամէն չարեաց հետ տակաւին ինչէր, ինչ փորձանքներ բերած է եւ կը բերէ ձեր գլխուն։ Ամէն բնազննին փիլիսոփաներու եւ հըմուտ բժշկաց փորձովն ստուգուած է, որ ցանկութիւնը հարկաւ ձեր ներքին գործարանները կը շփոթէ, կենսական հիւթը կը թիւնտարէ եւ կ'ապականէ, ընդհանուր քրային տկարութեամբ ձեր անդամներն ու գլխարաններն իրենց

պատշաճ գործողութիւնը կը կրուսանեն։ իրենց պաշտօնը կատարելու անկարող կը լինին, ձեր ձեռքերը թուլած կը գողան եւ ոտքերը կը դեդեկն, տկանները կը շառաչեն եւ լուրութեան կարողութիւնը կը պակտի, ձեր աչքերուն տեսութիւնը կը նուազի եւ կ'ըսպառի։

Շատերու թշուառութեան առիթ եղող մէկն ալ այն է որ՝ այս վիճակիս մէջ շատերն ամուսնացած ու իրենց սիրոյ եւ ուրախութեան առաջին օրերը դառնացուցած են անկարող լինելով իրենց ամուսնական պարտքը կատարել, եւ իրենց այս ապօրուութեան պատճառը չը գիտնալով որ բուն իսկ իրենք են, յիմարարար կը դիմեն անմիտ տէլիքներու եւ մուսնելու եւ շատ անգամ չարարարոյ խաբերաներու կամ ու ե իցէ յիմար անպիտանի մը, կ'աղաչեն, ոտքը ձեռքը հազար անգամ կը համբուրեն, ստակնին կը մօթեն, վերջապէս ամեն բան չեն խնայեր միայն թէ դարման մի դրուեն։ Բայց շատ անգամ յոյսերնին ի դերեւ կ'եննէ եւ իրենք ընդերկար կը մնան նոյն տկարութեան մէջ, քիչ անգամ կը պատահի որ գիտցողի մի հանդիպին եւ օգուտ քաղեն։ Այլ ահա բացարձակապէս կ'ըսեմ, որ այս ամէն աղետից մէկ հատիկ ու վճռական դարմանն է քրիստոնէական սրբութիւն, ողջախոհութիւն եւ ժուժկալութիւն, որոյ հետ նաեւ հմուտ բժշկի մը դարմանը։ Բայց դարձեալ կը կրկնեմ թէ պէտք է գիտնալ որ առանց ողջախոհութեան որ եւ իցէ դարման անօգուտ է, քանցի տեսողութիւն չունի։

Չարհուրելի կէտ մի եւս կայ՝ զոր չեմ ուզեր զանց առնել, բղձախոհ մը լին, որ այսպէս իւր զօրութիւնը որ կարացուցած եւ անձը եղծած է, եթէ գժբաղդարար սոսնց ժուժկալու

Թեամբ կողգուրուելու ամուսնանայ, շատ անգամ զուտի չունենար և եթէ զաւակներ ունենալու յաջողի, այն զաւակները կամ բնաւ արեւ չը պիտի տեսնեն, եւ կամ ծնելէն վերջը թոշնած ու թառամած տունկի նըման պիտի թաթափին ու չորանան, իսկ որ և իցէ միջոյններով եթէ ասորին, ո՛հ, խեղճ կեանք, ի՞նչ տղութի պիտի լինի նոցա կենաց ընթացքը. այն թշուառ էակները հիւանդոտ, ցաւալից, հաշմոտ, վիրաւից, ծիրեալ եւ շատ հիւանդութեանց զիւր մէտ կեանք մի պիտի անցունեն, տանջանք պիտի լինին թէ իրենց անձին և թէ իրենց շրջակայից, ի՞նչ երանութիւն պիտի աւթեն այսպիսի զաւակներ իրենց գերգաստանին, ի՞նչ բերկրանք ու միսթարութիւն պիտի զգան ամուսինք, ընտանեկան կենաց քաղցրութիւնն ու խաղաղութիւնը ուր պիտի վայելեն, մարդկութիւնը կամ ազգը ի՞նչ օգուտ պիտի սպասէ իւր այսպիսի անդամներէն և ի՞նչ պիտի վայելէ, եթէ այսպէս երթայ եւ շարունակէ, մարդկային ազգը խումբ մի զաւաճներ, ցուցանքաւոր հրէշներ և հաշմոտ անդամներ պիտի ունենայ, որ պատիւ չը բերեն իրեն: Քանզի իւր զեղճման և ապահանեալ վարուց արգիւնքն ու հետեւանքն է այս, առաքինութիւն և օրինապահութիւն չունենալուն ապացոյցն է. վասն զի բարի վարուց հետեւանքն է առողջութիւնը, զօրութիւնը և աշխատասիրութիւնը, հետեւաբար իւր վարձքն ունի՝ զուարթ բերկրանքն ու սրտի խաղաղութիւն: Իմաստասէր մի իրաւամբ երջանկութեան համար սա երեք պայմանները կը պահանջէր, առողջ մարմին, ազատ միտք, ու մաքուր սիրտ: Քանզի ի՞նչ պէս կարելի է երջանիկ ըլլալ, երբ մեր մարմնոյ մէկ կտրել վնաս զգալով արեւ

բութեամբ և մոտատանջութեամբ կը խռովի մեր միտքը. ինչպէս երանելի կրնամք ըստիլ, երբ մեր միտքը զանազան սուտ ու փնասակար նախապաշարութիւններով, առասպելներով և կամ չար խորհուրդներով կաշկանդուած է. ո՛հ, միթէ կարելի է երջանիկ համարիլ, երբ մեր սիրտն ապականուած է մութութեան և մոլորութեանց պժգալի կեղտերով. քաւ լիցի: Ուրեմն մարդկան ազգի թշուառութեան պատճառն իրենց անսանձ թողած կիրքերն են:

Ե.

Դուք ո՞վ մանկունք, պատանիք և երիտասարդք, այս ամէնը լսելով արդեօք համոզուեցա՞ք, որ ցանկութեան խորհուրդը իւր բոլոր գործնական հետեւանքներովը ձեր կենաց դահլիճն ու ձեր քաղցր երջանկութեան թշնամին է. արդեօք ձեր այժմեան ունեցած շատ կամ սակաւ փնասներովը բազդատելով իմ ասածներս՝ կարող եղա՞ք հետեւցնել, որ ձեր ապագան ողորմելի և թշուառ է: Այս անաչառ դատողութիւնն ընողը պիտի շահի:

Բայց ես գիտեմ և քաջ համոզուած եմ որ ձեզմէ իմ ստ շատերը որ առաւել կամուպտտ են՝ տակաւին չը պիտի հաւատան թէ կիրքերը, մանաւանդ ցանկութեան կիրքը կարող են այդչափ վնասներ հասցնել, և ինչպէս պակասամիտք կը կարծեն, զոքո՞ւ ալ վավաշտ գործողութիւնք կամ նոցա խիստ հասարակը, գիճութիւնը իբր անհրաժեշտ կարեւորութիւն կը համարին. ո՛հ, խիստ կը սխալն զայս ըսողք եւ չորաչար կը մոլորին նոցա հետեւողք. քանզի այդ եղեռնագործ մոլութիւնը բնաւ մէկու մի համար ոչ մի ժամանակ կարեւորութիւն չունենալէ զատ,

խնայէս յայտնեցինք, իրիստ մեծ վնաս
ներու ալ պատճառ է :

Կան ձեզմէ շատեր ալ, որք կ'ըսեն
թէ այս որ կամ այն որ իրիստ մոլած է
այդպիսի չար կրիւք, եւ յաճախակի
զանազան միջոցներով կը կատարէ իւր
չար կամքը, բայց բնաւ վնաս մի կրած
չունի, միշտ առողջ և առողջ է եւ
ուրիշ ասոնց նման շատ մի իրենց մո-
լութեանը նպաստաւոր առարկու-
թիւններ կ'ընեն, Ես չեմ մեղադրեր,
մանաւանդ աւելի ուրախ կը լինիմ, եւ
թէ իրենց մօտաց մէջ յղացած դեռ
ևս ուրիշ առարկութիւններն ալ գիտ-
նամ, որոյ հնարաւոր պատասխաններն
ու լուծումը և ճշմարիտ պատճառնե-
րն ըստ կարի տալով՝ կարողանամ ա-
զատել զիրենք այն ամեն վտանգներէն
յորս կը ձգէ չար ցանկութիւնը :

Ձեզ վնասակար է սուտ բարեպաշ-
տութեամբ կեղծաւորիլն ալ, վասն զի
անով այդոյ միտքը կը շիտթէք, որք և
զձեզ անարատ համարելով՝ կը քաշուին
բան խօսելու եւ դուք կը մնաք նոյն
ախտին մէջ և կը մաշիք չարաչար :

Յիրաւի որդեակք իմ, կը տեսնեմ
որ հետախօյղ էք, ինչպէս լաւ նկա-
տեր էք որ այդ մոլութեան հետեւող
ներէն ոմանք շատ մեծ վնաս չեն կը-
րած, թերեւ շատ անգամ այդ խօսքն
բաժն առնելով զձեզ իսկ ակնարկած
լինիք, թէ և սարդ խոտոտլանիք աւել-
ի լաւ կ'ընէք, քանզի գուցէ այդպիսի
իսկ խորհուրդներով ապահով կը լի-
նիք և ձեր վերայ վտանգ չը նշմարելով
ձեր մոլութեան մէջ յարատեւէք եւ
յանկարծ օրմի զձեզ փշուած կը տես-
նէք՝ երբ ալ անօգուտ կը լինի ձեր բե-
կորները դարմանել :

Արդարեւ հանապազօրեայ օրինակ-
ներով տեսնուած է, որ ձեզմէ ոմանք
չուտով կենթարկին մոլութենէ յառա-
ջացած դառն վնասներուն, իսկ ոմանք

երկար ատեն չարունակելով իրենց
կրից թելադրածը, երեւելի և դուրսն
յայտնի վնաս մի չեն կրեր, կամ գէթ
այնպէս կը համարին թէ չեն կրեր, որ
արդարեւ մեծ բարեբաղդութիւն է եւ
թէ մէկուն պատահած է, սակայն իմ
խօսքերս ըսողները պէտք է վստահա-
նան իրենց այդ բարեբաղդութիւն վերայ,
պէտք է կարծեն որ մինչ խալառ պիտի
դիմանան : Այն, որչափ գէշ են այսպի-
սիներն որք այսու վստահութեամբ
թէ իրենք չեն զգուշանար, առաւել
կը մոլին և թէ այս փաստով զայս ալ
համոզելով այդոյ չարեաց ալ պատճառ
կը դառնան :

Սակայն մի վստահիք որդեակք իմ,
ձեր այդ հալուադիւտ յաջողակու-
թեան վերայ, զոր բնութեան և ձեր
ծնողաց առաքինութեան պարտական
էք, սակայն եթէ այդպիսի տկար խոր-
հուրդներով, այդ ընտիր բարեմաս-
նութեան յարգը չը ճանչնաք, կը գայ
օր, որ դուք եւս կը կորուսանիք զայն,
քանզի այդ չար ախտին հետեւող ու
չը վնասուող չը կայ :

Մտածեցէք, որդեակք իմ, իրիստ
բարակ ապակին թեթեւ հարուածով
մի կը կտորի, իսկ հաստ ապակին դժ-
ուարաւ կամ ստատիկ հարուածով կը
կտորի, բայց վերջապէս կը կտորի : Մի
թէ չէք տեսներ որ հոյն ու քարք նոյն
սնդութիւնը չունին, և քար քարէ ա-
ւելի կարծր ու դիմացկուն է, չէք գի-
տեր որ երկաթն ու կապորը տարբեր
կարծրութիւն ունին : Բայց ասոնց ա-
մենէն կարծր ու դիմացկունին վերայ
եւս երկարատեւ ու շարունակեալ
հարուածները սրբապ չեն երթար,
ամեն մէկ հարուած աննշմարելի փոշիի
չափ մասեր փրցնելով՝ կը գայ ժամա-
նակ, որ մեծ խրամ մի կը բանայ, ու-
րեմն չը կայ հարուած մի որ պարապն
անցած լինի, անշուշտ մեծ կամ փոքր,

քիչ կամ չատ, կանուխ կամ ուշ ներ-
գործութիւն պիտի ընէ : այս տարբե-
րութիւնն ալ կը պատահի նիւթին
զանազանութենէն, այսինքն տկար կամ
չօրաւոր լինելէն : հարուածն սկսեալ
ժամանակէն, այսինքն կանուխ կամ
ուշ կսելէն, յաճախելէն, տեւողու-
թենէն և այլն : Ահա զուր ալ ճիշդ
այսոյն էք : ձեր կիրքերն ու մղու-
թիւնները եթէ ձեզմէ տմանց վերայ
չուտով երեւելի ներգործութիւն չը-
նէր, պատճառն այն է, որ նախ նոցա
կազմի բնութեամբ ամուր և կատա-
րեալ առողջ կը լինի : երկրորդ՝ իրենց
կիրքերը բարեբաղդութեամբ և բա-
րերար պատճառով մի ուշ արթնցած
և գործադրուած կը լինին և յաճախած
չեն լինիր : երրորդ՝ չեն յարատեւեր :
այլ շուտով կը զգան և ետ կը կենան :

(Երբեմն ինչպէս)

ԻՍՍԻ ԶԸՀԱՍԿԱՑԱԴՆԵՐՈՒՆ ՀԵՏ

ԳՈՐԾ ԶՈՒՆԻՄԲ

Արշալոյս իւր 975 թուով դար-
ձեալ Սիօնի գէմ յարձակած էր իրեն
ընտրան լիզուաւ ևւ թշնամական ու
գլուխ : Նոյնպէս Հայրենիքի 176 թուոյն
մէջ օտարկաւորութենէ լուծուած Կա-
րապետ Տ. Մինասեանը նամակ մի հը-
րատարակած էր իւր Ի պատասխանի
Սիօնի հերքման : Սիօնի թէ Արշալոյս
և թէ Հայրենիքի հրատարակութեանց
մէջ հակառակութեան ցած ոգի մը
նշմարելով՝ չուզեր պատասխանել ևւ
իւր էջերը անօգուտ բանակաւութիւն
լինելու : Սիօն բաւական կը համարի

յայտնել, որ չունի իրենց հակառա-
կասիրութեան կիրքը և չը անուշաներ
յինքն առելութե և խռովասիրութե
ուգի, որ ամեն ողջամտաց զգուանք
կ'առթէ և ոչ այլ ինչ : այլ Սիօնի նշանա-
բանն է ԽԱՂԱՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ և ՄԱՐ-
ԴԱՍԻՐՈՒԹԻՒՆ : Բայց որովհետեւ Ար-
շալոյս մասնաւոր նպատակաւ կը ջա-
նայ Երուսաղէմայ Միաբանութիւնը
Էջմիածնայ Մայր Աթոռոյն ևւ նորա
Գահակալ ամենայն Հայոց Վեհ. Կո-
թողիկոսին հետ թշնամացնել, այս մա-
սին հարկ կը համարինք հետեւեալ
պաշտօնական ազդը հրատարակել :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԴԻ

Ա.

Մանր Ս. Էջմիածնի Մայր Աթո-
ռոյն իրաւունքն ու պատիւը ամեն կեր-
պիւ պաշտպաններ է ցարդ և կը պաշտ-
պանէ միշտ : քանզի Միաբանութիւնը
լաւ դիտէ, որ Մայր Աթոռոյ իրաւուն-
քը, Հայաստանեայց Եկեղեցւոյ իրա-
ւունքն է և Հայաստանեայց Եկեղեց-
ւոյ իրաւունքը Ազգի կեանքն է : հե-
տեւորար ինչպէս որ արժան է կեան-
քը սոսկանել, նոյնպէս կը պահպա-
նէ Մայր Աթոռոյ իրաւունքը : այս
պէս ալ նորա Վեհափառ Գահակա-
լին հետ երբեք թշնամութիւն չունի,
և եթէ ինչ ինչ գործոց մասին անհա-
մաճայնութիւն լինի, այն եւս թշնա-
մութիւն չէ :

Ուստի Արշալոյսը այս մասին բոլ-
րովին կը սխալի, երբ երկու Աթոռոյ
մէջ թշնամութիւն կ'երազէ : վասն ո-
րոյ կը յորդորենք զե՛րբ, որ այս տեսակ
հրապարակական թշնամութեամբ կը
կու Աթոռոյ մէջ որքան ցանկելու չա՛ջ
խառնի, և տնով խմբագրութեան սրբ.
բողոքն սրբորը չարատաւորէ :

Բ.

Ժամանակէ մը 'ի վեր ցաւօք կը տեսնուի որ Եկեղեցականաց տեղափոխութեան մասին Ս. Եկեղեցւոյ սահմանը եղծման ենթակայ լինելուն 'ի գայթակղութիւն ժողովողեան ցաւալի դէպքեր կը պատահին երբեմն. Եկեղեցականներու տեղէ տեղ գնացած Ժամանակ տեղոյն Եկեղեցական իշխանութեան կողմանէ վիայական չը սրահանջուելով, ոչ գովելի բարուք Եկեղեցականներ մի տեղ անորին շարժելով՝ մի ուրիշ տեղ երթալու դիւրութիւններ կ'ունենան. և երբեմն երբեմն խաբէբայ անձինք իբր Եկեղեցական կրօնեկայայտնէն դիտելք. ինչպէս հետեւեալ վարքագրութենէն կ'երեւի:

Քիլիսի Վրիգոր Ստեփաննեան անուն անձը՝ 'ի ծնէ Պապական, Լիբանանու վանքը կրթութիւն առած, 20 տարեկան հասակին մօտ իբրեւ Հայ Քիլիս գնացած, անտի Կիլիկիա և ըստ իւր ասութեան հանգուցեալ Կիրակոս Կաթողիկոսէն ուրար առած, անտի ալ Կեսարիա երթալով, Թէփէքէղեան Միլրոյի գտներ հետ ամուսնացած, Ժամանակ մը կենալէ յետոյ Սեբաստիոյ վրայով Եւդոկիա գնացած և ըստ իւր ասութեան նոյն տեղի Առաջնորդ Կեսարացի Յակոբ եպիսկոպոսէն վարդապետ ձեռնադրուած՝ Յարութիւն անուամբ: Այնուհետեւ երբեմն բողոքական քարոզիչ և երբեմն Պապական վարդապետ և այս վերջին Ժամանակներն Անթաքիոյ գիւղը իբրեւ Հայոց վարդապետ թափառելէ յետոյ, Ս. Աթոռս եկաւ: Իրեն ձեռքի թըղթերը նայելով՝ Թէ և իբրեւ վարդապետ նկատուեցաւ. բայց կասկածելի լինելուն, մանաւանդ վիայական ալ չունենալով, ստիպուեցանք քննութիւնել միանգամայն Կիլիկիոյ Վ.Կ.Տ. Մը.

կրտիչ Կաթողիկոսին և Կեսարիա ու Եւդոկիա գրեցինք: Կիլիկիոյ Վ.Կ.Տ. Կաթողիկոսը տեղեկութիւն տալով, որ այս մարդը վարդապետ եղած, ամուսնացած, վերջէն ամուսինը թողած խաբէբայ մ'է, և մանաւանդ քննութեան մէջ ինքն ալ խոտոտվանելով Կեսարիա ամուսնանալը և վարդապետութեան վաւերական չըլլալը, վերար, փիլոն և ինչ որ քովը կը գտնուէր Ս. Եկեղեցւոյ վերարբերեալ, առնելով՝ ինչպէս արդէն էր, լոկ աշխարհական արձակեցինք Վրիգոր անուամբ. և որովհետեւ խնդրեց վերադառնալ իւր կնոջ քով երթալ 'ի Կեսարիա, թողատուութեամբ գնալ անդ:

Ահա իւր գիմայ նկարագրութիւնն ալ. հաստկը միջակ և բարակ, գլուխը հաւկրթմած և երկայն, մազերը շագանակագոյն, դէմքը վախ և թիւրակ, ճակատը ցած, աչքերը խառն, քիթը ուղղածիդ, սուր և միջակ մեծութեամբ, մօրուսը շիկագոյն, սակաւ ինչ ցանցաւ և կարծ, պիտը կարծ և մահկածեւ, չըթուէրը կախ, մանաւանդ վտրի չըթուէրը, բերանը միջակ մեծութեամբ, ակունները երկայն, որք խոտելու ատեն՝ դուրս կը ցցուին, կը զակը սուր, ուսերը նեղ և փոքր ինչ վերամբարձ, խոտակցութեանը մէջ թլուտու և արագախօս, ձայնը փոքր ինչ խեղդուկ:

Այս տեղեկութիւններն տալով կը դիւշտցնենք մեր համայն սիրելի Աղբայիները այսպիսի խաբէբայ անձինքներէ, որք դժբաղդաբար յաճախ կը տեսնուին վերջին Ժամանակներու մէջ՝ 'ի գայթակղութիւն պարզամտայ և 'ի նախատինս քրիստոնէութեան:

Ի Դիւանագրան:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Յուսէ՞մեզ որ մեր սիրելի Ազգին ցաւալի տեղեկութիւններ տալ ստիպուած եմք : Ի Բեթղէհէմ Քրիստոսի Տեառն մերոյ Ս . Մենդեան պարին վրայ կառուցեալ մեծ Եկեղեցի մը կայ , ուր ամենայն հաւատացեալ Քրիստոնեայ աղգեր իրենց ուխտը և երկրպագութիւնը կը մատուցանեն . բայց Հայք և Յոյնք ըստ որում Օսմանեան Բարեխնամ Տէրութեան հարստակ Ազգեր՝ Տէրութիւնը այն մեծ Եկեղեցին Հայոց և Յունաց հաւատացած է ընկերութեան հաւասար իրաւունք տալով , որով կրօնական արարողութիւններ կը կատարեն և բնական հետեւութեամբ նոյն Ս . Տեղի սպասաւորութիւնը կ'ընեն , այսինքն կ'աւելն և կը լուանան , թէ և այս սպասաւորութիւններն չը գիտցողաց համար նըշանակութիւն չունին , բայց կրօնական արարողութեանց համահաւասար եւ համադոր ազգեցութիւն ունին ՚ի մասին սեպհականութեան Ս . Տեղեաց : Յոյնք տիրապետական տենչով այն մեծ Եկեղեցին , ինչպէս ուրիշ Ս . Տեղեր իրենց սեպհականելու փորձեր ըրած են ընդդէմ մեր Ազգային իրաւանց , բայց իրենց նպատակին չեն հասած . քանզի քննութիւն ընելով Տէրութիւնը Յունաց նենդ ընթացքը յայտնուէր եւ Տէրութիւնը իւր նախահարց տուած շնորհները և համատացութեան հաւասար իրաւունքները վերադին հաստատեր է . այսու ամենայնիւ Յոյնք դարձեալ տիրապետական տենչով միշտ փորձ կը փորձեն իրենց սեպհականել այն մեծ Եկեղեցին ընդդէմ Տէրութեան տուած ընկերային սեպհականութեան իրաւանց և ընդդէմ քրիստոնէութեան : Եղեր է ժամանակ որ խռովութի չը յարուցանելու հա-

մար լուեր են մեր նախնիք , բայց այս խաղաղասիրական ընթացքը խիստ վնասակար եղեր է մեզ համար . քանզի հետզհետէ փոքր առ փոքր խնդիրք մեծցեր և Բարեխնամ Տէրութիւնը ստիպուեր է միջամտել և երկու կողման ընկերային իրաւունքը դարձեալ կարգադրել՝ երկու կողման ալ պատուիրելով որ իրենց ընկերային հաւասար իրաւունքը մէկզմէկէ յափշտակելու փորձ չը փորձեն :

Յոյնք իրենց բնական եղած յափշտակութեան ոգիէն շարժեալ , այս անգամ եւս փորձ կը փորձեն ընդդէմ Բարեխնամ Տէրութեան Հայոց և Յունաց շնորհած հրովարտականութեան ընկերային հաւասարութեան իրաւունքը ժխտել :

Ա . Հայաստանեայց Առաքելական Ս . Եկեղեցւոյ օրինաց համեմատ հանդիսաւոր օրեր , տեղւոյն Առաջնորդը եւ կեղեցական զգեստիւ Առաջնորդարանը կը տանին ամեն տեղ ուր որ Հայ կայ . Յոյնք ջնացին արգիլել մեր Տեսուչ Ժամարարի Ս . Այրէն ելլելով մեծ եկեղեցւոյն սիւնադարդ գաւթէն անցնիլը և արգիլեցին :

Բ . Հայաստանեայց Ս . Եկեղեցւոյ ծիսից համեմատ մկրտեալ երախայն «Նոր սիսն ծնեալ մանկունք» ըսելով , Սուրբ Եկեղեցիէն տուելը կը տանին , նոյնպէս հարսանիքը՝ հարսանեաց արարողութեամբ եւ ննջեցեալը՝ թաղման կարգով գերեզմանատուն , բոլորն ալ ըստ Հայաստանեայց Ս . Եկեղեցւոյ արարողութեան : Յոյնք մեր այս արարողութիւնքը խափանել կ'ուզեն :

Նոյեմ. 17ին երեքօրեայ մկրտեալ երախայ մը մեռանելով ըստ սովորութեան Ս . Եկեղեցւոյ սիւնադարդ գաւթէն անցունելով հիւսիսակողմը՝ Հայոցս սեպհական եղած Եկեղեցւոյն մէջ թաղման կարգը կատարած ժա-

մանակ, Յոյնք ձեռքերին բիրերով յան-
կարծական յարձակմամբ ննջեցելոյն
վրայ կը դիմեն. Եպիսկոպոսը կը գոչէ, ե-
րախայն դուրս նետեցէք, մին կը յար-
ձակի կը յափշտակէ խաչը խաչկալի
ձեռքէն և գետին զարնելով կը խոր-
տակէ. միւսը վարդապետին շուրջառը
կռնակէն քաշելով կը սպառաւէ. ո-
մանք եւս դադարէն վրայ կը յարձա-
կին, արարողութիւնը կը խանգարուի,
զորքը հազիւ վերայ հասնելով մեր
վարդապետաց եւ Յունաց բազմու-
թեան մէջ կը մտնէ : Մեր Ամեն . Ս .
Պատրիարքը , գրաւոր կերպիւ տեղ-
ւոյս Կառավարչին բողոքեց և ՚ի Պօլիս
փոխանորդին հեռագրեց Բ . Դռնէն
եկած հրամանի մը վրայ Բդեշխը գը-
նաց ՚ի Բեթզէմ՝ եղած անցքերը
քննելու . Յոյնք ուրացան իրենց այս
ընդդէմ՝ քրիստոնէութեան բարքարո-
սական յարձակումը : Մեր Տեսուչը
խնդրելով Բդեշխէն որ զօրաց հարցա-
նէ, յայտնելով որ ինքը կ'ընդունի նոցա
վիայութիւնը . Բդեշխը ստիպուեցաւ
նոցա հարցանել , որք հաստատեցին
Յունաց անիրաւութիւնը :

Յոյնք դեռ եւս ասով չը բաւակա-
նանալով և աւելի եւս յառաջ երթա-
լով սկսեցին այնտեղի աւելն եւս ար-
գիլել , առարկելով թէ Եկեղեցին մերն
է : Տեսնելով որ օգնութեան յոյս չը
կայ այս տեղ , Ընդ . Ժողով գումարե-
լով հանրագիր մը ստորագուեցաւ և
զրկուեցաւ ՚ի Պօլիս առ Փոխանորդն ,
որպէս զի Ազգ . Վարչութեան , Կրօ-
նական եւ Քաղաքական խառն Ժո-
ղովոց միջոցաւ Բ . Դռնն ներկայա-
ցնելով , Կոմանան Բարեխնամ Կոյ-
սեր գթութիւնը հայցէ : Այս մասին
սղագային Կեդրոնական Վարչութեան
սլ սէտք եղածը գրուեցաւ :

Մինչդեռ մենք թէ՛ ընկերովի տե-
ղերը՝ ընկերութեամբ և թէ՛ յատուկ
տռանձին տեղերը՝ տռանձին աւելու-
իրաւունքնիս կը պահանջէինք , Յոյնք

տեղական Կառավարութիւնը իրենց
թիկունք ունենալով , ընկերովի տեղե-
րը աւելէ յետոյ , Ս . Եկեղեցւոյն հիւ-
սիսակողմը մեր յատուկ սեպհ սկան Ե-
կեղեցին ևս իրենք աւելու փորձփորձե-
ցին , որոյ վերայ տեղական Կառավա-
րութե բողոքեցինք , բայց անյսելի ե-
ղաւ , եւ փոխանակ մեր իրաւունքը
պաշտպանելու , հրամայեց Միւսիւրին
մեր վարդապետները նոյն խակ Կայսե-
րական Բ . Հրովարտակներով Հայոց
Ազգի . շնորհեալ Եկեղեցիէն զինու զօ-
րութեամբ դուրս հանել . և Յունաց
աւելլ առ որ կատարուեցաւ ՚ի 22
Դեկտեմբերի : Սորա վրայ անմիջապէս
թէ՛ Բ . մեծ Եպարքոսին թէ՛ Արտաքին
գործոց նախարարին եւ թէ՛ Ազգ .
Պատրիարքարանը բողոքելով , իրա-
ւունք և արդարութիւն և Կայսերա-
կան Բարեխնամ՝ Կառավարութեան
պաշտպանութիւնը խնդրեցինք :

Յուսով եմք որ Օսմանեան Բարեխնամ՝
Տերութիւնը , ինչպէս յառաջները՝ Յու-
նաց զեղծման և բարոյական ընթացից
հասու լինելով և նոցա յափշտակու-
թիւնները իմանալով , վերահաստատու-
ելու երջանկայիշատակ նախնի Կայսե-
րաց մեզ շնորհած իրաւունքներն եւ
արտօնութիւնները , նոյնպէս և այժմ՝
հասու լինելով Յունաց այս անիրա-
ւութեանց եւ յափշտակութեանց ,
կրկին պիտի վերահաստատէ Հայոց
Ազգիս ձեռքը եղած Կայսերական
Խաթմի Շէրիֆները , որք բացարձա-
կապէս կը լծուեն մեր ընկերովի և ա-
ռանձին իրաւունքները :

— Նոյ . 26 ին տեղւոյս Պէլէտիէի
նախագահ Եուսուֆ էֆէնիսին գործոյ
Դ՝ առթիւ Կ . Պօլիս երթալով , քաղա-
քիս Վսեմ բդեշխին տնօրէնութեամբ՝
սորա աթիւն նախագահ կարգեցաւ Պօլ-
սեցի ծերունի Մէհմէտ Էմին էֆէնիսն :

— Դեկ . 4 ին Ամերիկայի նորընտիր
Հիւարատոս Մատլս տէ Ֆրէնքէս հոս
քաղաքս ժամանեց և հարկ եղած պաշ-

տմանական այցելութիւններն կատարուեցան :

— Գեկ. 14 ին՝ Շարաթ լուսնալու գիշեր, որ քաղաքիս մէջ սաստիկ մը բրկալից ժամանակ էր, Յոսպէի Աւրստրիական Հիւպատոս Մեծ. Յակովբ ազա Մուրատեանցի ընկեր՝ անուանի վաճառական Պ. Վալէրոյի վաճառատունն ետեւի կողմէն (որ բազանեաց աւազան էր) գոլեր մտնելով շատ քանակներ են գաղան բանալ և 4 մասի չափ բանալու ալ յաջողած են, բայց անհնարին գտնելով բոլորովին բանալն, միմայն մէջ տեղ գտնուած 30000 զուրուշի չափ դրամ ստանալ գնացած են, տակաւին գոլերն յայտնուած չեն :

— Ամսոյս միջին օրերը՝ քաղաքիս մէջ տարիներէ՝ ի վեր չը տեսնուած տուտութեամբ ձիւն տեղաց, անձրեւներն առատ են, և քաղաքիս հարաւակողմն՝ Աբբայ—հր բուռած սղոխերն լեցուած ու սկսած է հոսիլ, մինչդեռ ուրիշ մի քանի առատ անձրեւեկիւ տարիներ հազիւ Փեար, ամսոյն մէջ կը յորդեր և այն ոչ բերնէն :

— Իսմանկոսի դուռը տուն մը, յորում հրէայ ընտանիք մը կը բնակէր, փոթորիկ գիշեր կ'շարժի հողմին սաստկութենէն, ընտանիքը՝ իրենց բնոյն մէջ կարծելով թէ գողմուած է տունը, մէկ զմէկու ետեւէ երկիւղեւ փողոց կը վազեն, ընտանիքի անդամներէն ոչ ոք չը մնալէն յետոյ՝ տունը տմբոջապէս կործանեցաւ :

— Յոսպէի մէջ եւս 240 մեթրոյ տան մը առաստաղը ամբողջնետամ է: Ծովն ալ խիստ սաստիկ այլեւս եղալ էր, բայց այս փոթորիկներու մ'ըջցին եկած ուխտաւոր՝ գահաւթիւն Աստուծոյ, անխնաս ի քաղաքս ժամանած են :

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ

ԴՊՏԱՐԻ
Հրուսեր առ երեսփոխան և կարգ խնդրաց
Եղեոսի ներկայ կրօնաբարութեան վերայ
Վերջնական գործոց յԱնդապ
Գեղար Գ. Վեհ. կաթողիկոսի վրայ Նիփա
Գուստերն քաղաքի հրատարակութիւնը և
այս մասին փոքրիկ գրած յօդուածը 17
Բարբ. իւնիոնց 19
Ա. Կր. Խոսք Երկրորդ պաշտօնից ուղղուած 20, 40

Գերեզմանատան խնդիր	25
ԱԶԳ.	25
Ժամանակագրականք 24, 47, 71, 94, 120	
144, 167, 161, 211, 240, 261, 286	
Հանգէս տարեգարծի նահատակութեան Ս.	
Վարդանանց և ժողովրդաւորաց վարժարանի Ս. Աթուշյա և ճառ.	25
Դիւանաթիւն	20
Խնամք մը իւր միակ անձին պատարանաւորութեան մը և հաշտական ամեն միոյն	52
Զգեղեցիկութենէ Ս. Գրոց	54
Նուիրատուութիւն	55
Պիւտէ	56
Բան ի նահատակութիւն Ս. Վարդանանց	58
Որդիք Աստուծոյ 49, 73, 97, 200	
Անցք Մեծին Նախօրեան ընդ Նիւմեն գետ	54
Ուխտաւորութիւն	57
Երգ ի վերայ Երուսաղէմի	60
Եղեոս	61
Հէգ Պանդուխտ	62
Համառօտ պատմութիւններ 65, 69	
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ. — Համառօտութիւն բրիտանական ուսման. — Ճաշոց գիրք. — Ատենի Աւետարան. Պատմութիւն 1, Էնի. թիւերի 64, 216	
Մի գիտար պայման պատմագրութեան	68
Ազգային կտակալիք	70
Արկամկոտութիւն և կրկնաձեւնագրութիւն	72
Եկեղեցական երգեցմունք	79
Տ. Երեմիա քահանայ և սխալացոյց իւր	85
Դատարարութիւն կանանց, 88, 106, 140, 158, 182, 205, 249, 272	
Օրացիք և ամենամական խնդիր	113
Արշալոյս Արարատեան և հայկաբանութեան խնդիր	117
Մարդու հոգեւոր ներգաշտակ կրթութիւններ 121, 145	
Հարցալնութիւն և հանգէս պայուսարաշխութեան և ճառ 126, 127	
Բարոյական	150
Մանկութիւն	145
Խաղաղաց առաջին արշաւանքը	152
Բարեկամական տեսութիւն ընդ խմբագիրն Արշալոյս 59	
Մահազոյք 164, 261	
Եղեղեղք 165, 259	
Ազատութեան վրայ ակնարկ մի	169
Խաղ	171
Առողջական 175, 197, 232, 237, 231	
Հրաշքը հաստատութիւն կրօնի	187
Փրփիկ նկատարութիւն մի	188
Առանց բրիտանականութեան բրիտանեաց տուն հաստատութիւն	196
Եր փոսի եթէ ոչ յիւրեմ	203
Եր կատարեալ	209
Գալ գրոց, ի տարարանի Ս. Յակովբեանց 1, 262	
Ան քննադատութեան եկեղեցական պատմութեան 2, Ս. Վ. Մուրատեանցի 217	
Պատմի ճանաչում աշակերտը	226
Բ փնտրել ինչ տխուր լինել	229
Ես տարարութիւնը չեմ կարող թողուլ 255, 251	
Առ օրացիկն պատմական	253
Ազգին արդի փնտրել	241
Պատմագրութիւն աշխատելու 261, 265	
Խնամաւորութիւն	259
Խոսք չը հաղագրողներուն հետ գործ չ ընելը	284
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱԶԳ.	284